Ազգ
Azg
24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 225(5307)
ISSN: 1829-1651

# Նախագահը կրկին Մոսկվայում է

**Նախագահ Սերժ Սարգսյանը երեկ աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Սարգսյանը մասնակցելու է այսօր՝ դեկտեմբերի 24-ին Մոսկվայում պետությունների ղեկավարների մակարդակով կայանալիք Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի ընդլայնված կազմով նիստին:**

**Ասել է թե եվրասիական ինտեգրման գործընթացները ամենայն արագությամբ առաջ են մղվում, ընդ որում՝ ոչ միայն հյուսիսային ուղղությամբ:**

**Մասնավորապես, դեկտեմբերի 22-ին էլ, ըստ ԱԳՆ հաղորդագրության, Փարիզում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն անցկացրել է եվրոպական երկրներում եւ միջազգային կազմակերպություններում հավատարմագրված Հայաստանի դեսպանների եւ մշտական ներկայացուցիչների ավանդական խորհրդակցությունը:**

**Խորհրդակցությանն անդրադարձ է կատարվել հանրապետության նախագահի տված հանձնարարականների կատարմանը: Թե ինչ հանձնարարականների մասին է խոսքն, իհարկե, չի նշվում, սակայն ակնհայտորեն խոսքը հնարավորինս եվրոպական ուղղվածությունը պահպանելուն է վերաբերում, հատկապես, երբ խորհրդակցությունը եվրոպական երկրներում հավատարմագրված դեսպանների մասին է:**

**Ըստ այդմ, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարները ներկայացրել են իրենց հավատարմագրման երկրներում եւ միջազգային կազմակերպություններում ընթացող գործընթացներն ու Հայաստանի հետ հարաբերությունների զարգացման նպատակով ձեռնարկվող քայլերը:**

**Էդվարդ Նալբանդյանը դեսպանների հետ քննարկել է Հայաստանի արտաքին քաղաքական բնագավառում վերջին զարգացումները, ամփոփել 2013թ. կատարված աշխատանքները եւ համապատասխան հանձնարարականներ տվել հաջորդ տարի իրականացվելիք աշխատանքների վերաբերյալ:**

**Հանդիպմանը հատուկ ընդգծվել է եվրոպական երկրների եւ կառույցների հետ քաղաքական երկխոսության առավել զարգացման կարեւորությունը, անդրադարձ է կատարվել դեսպանությունների գործունեության տնտեսական բաղադրիչի նշանակությանը, միջխորհրդարանական կապերի զարգացմանը, ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանը, տեղեկատվական դաշտում եւ դեսպանընկալ երկրների հասարակական կառույցների հետ աշխատանքներին:**

**Վ. Պ.**

# Գազային համաձայնագրերը վավերացված են, ընդդիմադիրները քվեարկության խախտումներ են մատնանշում

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Եթե ընդդիմության բուռն հակազդեցությունը Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ կնքված գազային համաձայնագրերին նպատակ ուներ ցույց տալ Ռուսաստանի ղեկավարությանը, որ Հայաստանի գազային միակողմանի կախվածությունը վավերացնող համաձայնագրերը Հայաստանում այնքան էլ միանշանակ չեն ընդունվում, դա նրանց հաջողվեց, քանի որ համաձայնագրերը վավերացնելիս երեկ բավական լարված իրավիճակ ստեղծվեց հայոց խորհրդարանում եւ նրա պատերից դուրս, իսկ համաձայնագրերի վերաբերյալ դրանց ընդդիմախոսների մտահոգություններն էլ բավական բարձրաձայնվեցին լրատվամիջոցներով:




«Մի քվեարկեք». ահա այսպիսի պաստառներ էին պարզել դեպի Ազգային ժողովի դահլիճ նաեւ լրագրողական կորպուսի ապակիների հետեւից երեկ, երբ պետք է քվեարկության դրվեին Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ ստորագրված գազային համաձայնագրերը եւ հատկապես այն մեկը, որով ռուսական «Գազպրոմին» է հանձնվում «Հայռուսգազարդի»՝ Հայաստանի սեփականություն քսան տոկոս բաժնեմասը եւ մինչեւ 2043 թվական կնքվում է ընդդիմադիրների համար անընդունելի եւ պետության ինքնիշխանությանը խփող, իսկ իշխանականների համար շահեկան գազային համաձայնություն:

Տես էջ 3

# Ադամ Շիֆի նոր նախաձեռնությունը

**Ադամ Շիֆը դարձյալ դիմել է նախագահ Բարաք Օբամային՝ խնդրելով, որ վերջինս թույլ տա ցուցադրել հայ որբերի հյուսած գորգը այն հատուկ միջոցառման ժամանակ, որ նա կազմակերպելու է Կապիտոլ Հիլում: Միջոցառմանը նա նպատակ ունի հրավիրելու Եղեռնը վերապրողներին, պատմաբաններին, ամերիկահայ համայնքի եւ Կոնգրեսի ներկայացուցիչներին: Նպատակը վեր հանելն է ամերիկյան կառավարության ջանքերը՝ օգնելու 20-րդ դարի առաջին ցեղասպանությունից տուժածներին եւ ցույց տալ վերջիններիս երախտագիտական քայլը:**

**«Արմինյն Միրոր- Սփեքթեյթր» շաբաթաթերթի դեկտեմբերի 21-ի համարը, հրապարակելով այս լուրը, միաժամանակ հիշեցնում է, որ դրանից առաջ Շիֆը դիմել էր Օբամային խնդրանքով, որ հայ որբերի հյուսած գորգը ցուցադրվի Սմիթսոնյան հաստատության թանգարանում:**

**Նոր նամակում նա հատկապես նշել է, որ Կոնգրեսի իր գործընկերներից շատերը տեղյակ չեն հայերի ցեղասպանության վերաբերյալ ամերիկյան կառավարության դիրքորոշման մանրամասնություններին: «Մենք հանրային թե մասնավոր ջանքերով օգնել ենք գաղթականներին վերատեղավորվելու եւ ոտքի կանգնելու: Բայց այդ բարյացակամ վերաբերմունքը զուր չի կորել: 1925-ին Ղազիրում (Լիբանան) ապաստան գտած հայ որբերը հյուսել են մի գորգ եւ նվիրել ԱՄՆ նախագահ Քուլիջին որպես երախտագիտության արտահայտություն: Պատշաճ կլիներ, որ այդ գորգը ցուցադրվեր այն հատուկ միջոցառման ժամանակ, որ ես նպատակ ունեմ անցկացնելու Կապիտոլ Հիլում առաջիկա հունվարին կամ փետրվարին», գրել է նա՝ հույս հայտնելով, որ Սպիտակ տունն այս անգամ կբավարարի իր խնդրանքը:**

**Հ. Ծ.**

# Թանկ գազ «Հայռուսգազարդի» 20 տոկոս բաժնեմասով, թե՞ էժան գազ առանց այդ բաժնեմասի

*Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի կարող է ինքնուրույն դատել, թե ո՞րն է իրեն ավելի ձեռնտու*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գազի դիմաց կուտակված 300 մլն դոլար պարտքի դիմաց «Հայռուսգազարդի» 20 տոկոսն անցավ ռուսական «Գազպրոմին»: Այս համաձայնագիրը երեկ վավերացվեց խորհրդարանում: Բնական է, որ քաղաքական ընդդիմությունն այս կապակցությամբ դրսեւորեց այն, ինչ պետք է դրսեւորեր տվյալ որոշման նկատմամբ անհամաձայնություն ունենալիս: Ցույց, քվեարկության բոյկոտ, Սահմանադրական դատարան դիմելու հայտարարություններ եւ այլն: Սակայն եթե սա բնական էր որպես քաղաքական պայքարի տարր, ապա «Ժառանգության» տիկնոջ հերթական ներկայացումը՝ պատգամավորական քվեարկության քարտերը գողանալու տեսքով, կամ մի քանի լրագրողների քաղաքական դեմարշները, մեղմ ասած, արտառոց էին: Դժվար թե որեւէ մեկը փաստ հիշատակի, որ աշխարհի որեւէ խորհրդարանում լրագրողները պահանջեն պատգամավորներից իրենց ցանկությանը համապատասխան քվեարկել, այդ նպատակով համապատասխան պաստառներով կանգնելով դահլիճի մեջտեղում: Սակայն մեզ մոտ վաղուց արդեն ձեւավորվել է քաղաքական ուղղվածություն ունեցող լրագրողների մի ամբողջ շերտ, որի դեպքում արդեն խոսք չի կարող լինել լրագրության սկզբունքների մասին: Այս մասին չէ, սակայն, որ կցանկանայինք խոսել:

Տես էջ 3

# Կիեւում ընդդիմությունը ստեղծել է «Մայդան» ժողովրդական միավորում

Ուկրաինական ընդդիմության ներկայացուցիչները Կիեւում հիմնել են «Մայդան» ժողովրդական միավորումը, որը հասարակական կազմակերպություն է: Ինչպես հաղորդում է Ունիան լրատվական գործակալությունը, դրա ստեղծման մասին կիրակի օրը հայտարարվել է Կիեւի գլխավոր հրապարակում՝ Մայդանում կազմակերպված «ժողովրդական վեչեի» ժամանակ:



Նոր կազմակերպության համանախագահներ են դարձել «Ազատություն» շարժման առաջնորդ Օլեգ Տյագնիբոկը, Կիեւի «Մոգիլյանսկի» ակադեմիայի նախագահ Սերգեյ Կվիտը, «Հարված» կուսակցության առաջնորդ Վիտալի Կլիչկոն, նախկին ներքգործնախարար Յուրի Լուցենկոն, երգչուհի Ռուսլանա Լիժիչկոն եւ խորհրդարանի «Բատկիվշչինա» խմբակցության առաջնորդ Արսենի Յացենյուկը, ինչպես նաեւ բանտարկված վարչապետ Յուլյա Տիմոշենկոն:

Յացենյուկի խոսքերով, միավորման գլխավոր քաղաքական խնդիրը նոր սահմանադրության ընդունումն է, որն էապես կսահմանափակեր նախագահի իշխանությունը: Դրանից բացի, շարժումը կմշակի երկրի վերափոխումների ծրագիր, որը կնախատեսեր կաշառակերության վերացում եւ դատավորների անկախություն: «Մայդան» կազմակերպությունը նաեւ հանդես կգա նոր հարկային օրենսգրքի ընդունման օգտին:

Մայդանում ընդդիմության ելույթները սկսվեցին նոյեմբերին: Սկզբում դրանց պատճառն այն էր, որ նախագահ Վիկտոր Յանուկովիչը հրաժարվում էր ստորագրել Եվրոմիության հետ ասոցիացման համաձայնագիր: Ավելի ուշ՝ նոյեմբերի 30-ի հանրահավաքը կոպտորեն ցրելու իշխանությունների փորձից հետո, այդ պահանջները մղվեցին երկրորդ պլան. ցուցարարները սկսեցին պահանջել, որ Նիկոլայ Ազարովի կառավարությունը հրաժարական տա, իսկ ներքգործնախարար Վիտալի Զախարչենկոն դատական պատասխանատվության ենթարկվի:

Ցուցարարները Մայդանում ստեղծել են մշտական ճամբար, որի մատույցները պաշտպանում են բարիկադներով: Ճամբարում օր ու գիշեր մնում են հարյուրավոր մարդիկ: Կիրակի օրը «ժողովրդական վեչեի» ժամանակ հրապարակ էր եկել մոտ 15-20 հազար մարդ:

**Պ. Ք.**

ԱԶԳ

## Ընթացիկ

# Արեւային տեխնիկայի զարգացման հեռանկարները գիտնականների եւ գործարարների համաժողովում

Դեկտեմբերի 7-ին լրացավ Սպիտակի ահավոր երկրաշարժի 25 տարին: 25 երկար եւ ձիգ տարիներն արդեն անցել են, բայց երկրաշարժի ազդեցությունը դեռեւս չի վերացվել: Մեր քաղաքացիների համար Սպիտակի երկրաշարժը դեռ չի ավարտվել: Երկրաշարժ-աղետները չեն ավարտվում այնքան ժամանակ, քանի դեռ մնում է աղետի հետեւանքով անօթեւան մնացած կամ գործազուրկ դարձած թեկուզ եւ մեկ մարդ: Գյումրիի, Սպիտակի, Վանաձորի եւ աղետի գոտու մյուս քաղաքներում ահավոր բարձր է գործազրկության աստիճանը, չկան բավարար թվով աշխատատեղեր: Բնակչության մեծամասնությունը հայտնվել է սոցիալ-տնտեսական եւ բարոյահոգեբանական ծանր իրավիճակում:

Ի՞նչ անել, ինչպե՞ս շտկել դրությունը, ինչպե՞ս ստեղծել այդ բավարար թվով աշխատատեղերը, ինչպե՞ս օգնել մարդկանց դուրս գալու այդ ծանր վիճակից:

Առաջին հերթին, իհարկե, անհրաժեշտ է մտածել արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկման եւ աշխատատեղերի ստեղծման մասին: Ակադեմիկոս Պարիս Հերունին համոզված էր, որ աղետի գոտին մասնավորապես եւ Հայաստանը ամբողջապես, կարելի է դուրս բերել ճգնաժամային իրավիճակից եւ դնել զարգացման ուղու վրա նաեւ արեւային տեխնիկայի եւ արեւային տեխնոլոգիաների նոր ոլորտի ձեւավորման միջոցով: Այս ոլորտը ի վիճակի է ստանձնելու լոկոմոտիվի իր կարեւոր դերը արդյունաբերության այլ ճյուղերի, վերամշակող արդյունաբերության, երկրի էներգետիկ անվտանգության եւ էներգետիկ կենսունակության բարձրացման, կիրառական գիտության զարգացման, երկրի միջազգային հեղինակության բարձրացման գործում: Դա այդպես է: Արեւային տեխնիկան եւ տեխնոլոգիաները այսօր մեծ պահանջարկ ունեն ողջ աշխարհում, առաջին հերթին, սպասվող գլոբալ էներգետիկ եւ էկոլոգիական ճգնաժամերի պատճառով: Սպասվում է, որ շատ շուտով աշխարհը ականատես կլինի արեւային տեխնիկայի հսկայածավալ համաշխարհային շուկայի ձեւավորման իրողությանը՝ իր 40 տրիլիոն դոլարի հասնող ծավալներով: Այդպիսին է արեւմտյան փորձագետների գնահատականը: Կարո՞ղ ենք մենք օգտվել այդ շուկայից եւ այնտեղ արտահանել մեր արտադրանքը: Իհարկե կարող ենք: Ավելին, մենք պարտավոր ենք ունենալ հելիոտեխնիկական սարքերի եւ սարքավորումների նոր արտադրատեսակներ եւ դրանցով մտնել արեւային տեխնիկայի միջազգային շուկա: Ոչ ոք բարոյական իրավունք չի տվել մեզ երես թեքելու մեզ ընձեռվող պատմական հնարավորությունից: Դա մեր շանսն է, դա մեր ճակատագիրն է: Ունենալով արեւային էներգիայի հսկայական պոտենցիալ մի կողմից եւ չունենալով բնական էներգառեսուրսների որեւիցե հուսալի պաշար մյուս կողմից, մենք իրավունք չունենք մերժելու ամեն օր մեզ բաժին հասնող արեւի աստվածատուր բարիքը:

Մեր անկախության առաջին իսկ օրվանից Հայաստանի գիտական հասարակությունը եւ մեր շարքային քաղաքացիները հարց էին բարձրացնում, որ Հայաստանի տնտեսության հիմքում դրվի հելիոտեխնիկական արդյունաբերության նոր եւ խիստ հեռանկարային ոլորտը: Դրա տեխնիկական եւ տեխնոլոգիական լայն հնարավորությունները մենք ունեցել ենք: Մենք այսօր էլ պահպանում ենք այդ հնարավորությունները եւ ի վիճակի ենք մեր սեփական ուժերով, ապավինելով մեր գիտական մշակումների վրա, կազմակերպելու ժամանակակից պահանջներին բավարարող արեւային տեխնիկայի արտադրություններ, նոր արտադրատեսակներով դուրս գալու միջազգային շուկա եւ ընթացքից լուծելով նաեւ Հայաստանի ու Արցախի հելիոֆիկացիայի խնդիրը՝ ապահովելով մեր ներքին էներգապահանջման զգալի մասը: Շատ կարեւոր է, որ մենք կարողանանք շտկել դրությունը ինժեներական եւ գիտական կադրերի պատրաստման գործում, որը մեզ թույլ կտա ստանձնել համաշխարհային լիդերի մեր կարգավիճակը պատմական հեռանկարում:

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միության եւ «Շիրակ» հայրենակցական միության նախաձեռնությամբ 2013 թ. դեկտեմբերի 17-ին կազմակերպված գիտնականների եւ գործարարների համաժողովը քննարկման դրեց Հայաստանում արեւային տեխնիկայի զարգացման հեռանկարները: Համաժողովը գտնում է, որ ճիշտ կլիներ, որ հելիոտեխնիկական արդյունաբերությունը ստանար պետական աջակցություն եւ կազմակերպվեր Սպիտակի երկրաշարժի գոտու քաղաքներում՝ դրանով իսկ փորձելով լուծել բավարար աշխատատեղեր ստեղծելու խնդիրը աղետից տուժված եւ աղետալի վիճակում հայտնված մեր բնակչության համար: Դա միայն կօգներ նույն խնդրի լուծմանը՝ ուղղված ՀՀ կառավարության եւ մասնավոր ներդրողների ջանքերին: Մենք ակնկալում ենք , որ մեր նախաձեռնությունը լայն արձագանք կգտնի մեր իշխանությունների եւ սփյուռքահայ գործարարների մեջ: Հույս ենք հայտնում, որ հարցը քննարկման կդրվի ՀՀ կառավարությունում եւ Ազգային ժողովում: Բավարար հիմքեր ունենք նաեւ ակնկալելու բիզնես համագործակցություն արեւային տեխնիկայի բնագավառում նաեւ Մաքսային միության երկրների հետ, որը իր հերթին կնպաստի Սպիտակի երկրաշարժի գոտում վերականգնողական աշխատանքները պատշաճ մակարդակով ավարտին հասցնելու գործում:

*Հայտարարությունը ստորագրել են բազմաթիվ գիտնականներ, գործարարներ եւ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:*

## ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ԵՎ ՊԱՏՎՈԳՐԵՐ

# Մեկ օր հայկական բանակում

**Ռուսաստանի հայերի միությունը եւ Համաշխարհային հայկական կոնգրեսը կազմակերպել էին համերգային ծրագիր զինվորների համար:**

**Օրերս ՊՆ զորամասերից մեկում տեղի ունեցավ համերգային ծրագիր, որին մասնակցում էին «Երգը բարեկամության կամուրջ» խորագիրը կրող ռուսական երգի հանրապետական երկրորդ փառատոնի մրցանակակիրները:**



**Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ Վլադիմիր Ադյանը նշում է, որ նման հանդիպումները շարունակական բնույթ են կրելու, եւ յուրաքանչյուրս պետք է մեծ ուշադրություն հատկացնենք բանակին, հայ զինվորին:**

**Կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի նախագահ Մարիամ Մարտիրոսյանն իր հերթին ավելացրեց, որ բանակի հետ համագործակցության հիմքը դրվել է դեռ տարիներ առաջ, որի շրջանակում իրականացվել են տարբեր միջոցառումներ, մասնավորապես՝ զորամասերի գրադարանների վերազինում, սենյակների կահավորում, կինոդիտումներ, քննարկումներ եւ այլն. «Այս տարի պատրաստվում ենք իրականացնել «Մեկ օր հայկական բանակում» ծրագրերի շարքը, որը ենթադրում է երիտասարդների այց զորամասեր՝ ծանոթանալու հայ զինվորի առօրյային, ինչպես նաեւ մշակութային միջոցառումների կազմակերպում»:**



**Միջոցառման ընթացքում Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանի անունից պատվոգրեր հանձնվեցին բանակաշինության գործում ակտիվ մասնակցություն ցուցաբերած սպաներին եւ զինվորներին:**

**Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական**

**Ռուսաստանի հայերի միությունը միշտ նմանատիպ միջոցառումներ կազմակերպել է ինչպես հայկական, այնպես էլ ռուսական բանակի համար:**

Ս. Հ.

# Ուսանողական մրցանակաբաշխություն ՀՊՄՀ-ում

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում օրերս տեղի ունեցավ ուսանողական մրցանակաբաշխություն՝ կուլտուրայի ֆակուլտետի հեռուստալրագրության երկրորդ կուրսի շրջանակում: Ամանորյա ուրախ մրցանակաբաշխության կազմակերպիչը նույն կուրսի ուսանող Արթուր Գասպարյանն է՝ կուրսի ղեկավար Դիանա Մարկոսյանի գլխավորությամբ: Բացի մրցանակաբաշխությունից, միջոցառմանը իրենց կատարումներով հանդես եկան Երգի պետական թատրոնին կից դպրոցի սաները՝ էլ ավելի ուրախ դարձնելով մրցանակաբաշխությունը իրենց ամանորյա, էստրադային, հիթային կատարումներով:



Արթուր Գասպարյանն «Ազգի» հետ զրույցում նշեց, որ սկզբում, երբ կար մրցանակաբաշխություն անցկացնելու գաղափարը, չէին պատրաստվում նման մեծ միջոցառում կազմակերպել, այլ լսարանում բաշխեին անվանակարգերը եւ վերջ:

Անվանակարգերը որոշվել էին նախօրոք՝ կուրսի շրջանակում, ապա նախօրոք անցկացված քվեարկության արդյունքների հիման վրա մրցանակները բաշխվեցին՝ պատվոգրերի տեսքով:

Անվանակարգերը հետեւյալն են. կուրսի ժպիտ՝ Կարինե Բայանդուրյան, կուրսի նորաձեւ՝ Լուիզա Ավագյան, ընկերասեր՝ Աննա Արթենյան, ամենախոր աչք ու ամենանուրբ՝ Սիմա Առաքելյան, սպորտային լրագրող ու ակտիվ՝ Ալլա Զաքարյան, ասմունքող՝ Աննա Հակոբյան, բանաստեղծ, մտածող ու բարի՝ Զեմֆիրա Քալաշյան, ասպետ՝ Գրիգոր Գեւորգյան, լավագույն լրագրող աղջիկ՝ Անի Գալստյան, լավագույն լրագրող տղա՝ Աղվան Ասոյան:

Միջոցառումը վարում էին նույն կուրսի ուսանողներ Գուրգեն Ալեքյանը եւ Սյուզաննա Թուխինյանը:

Ս. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Եթե երկիրը վաճառվել է…

Սերժ Սարգսյանը երեկ աշխատանքային այցով մեկնեց Մոսկվա: Մոսկվան այն է, ում, ըստ «շրջանառվող լուրերի» վաճառել են Հայաստանը, ինչպես ասում են՝ «30 արծաթի այսօրվա կուրսով՝ 300 մլն դոլարով»:

Հայաստանն ուրեմն «վաճառել են», բայց եթե երկիրը վաճառված է, ապա ի՞նչ է անում ընդդիմությունը՝ խորհրդարանի նիստերի դահլիճից դուրս գալուց, իշխանական պատգամավորների պատգամավորական էլեկտրոնային քարտերը, եթե այլ բառ չասենք՝ առանց նրանց իմացության վերցնելուց, խորհրդարանի միջանցքներում ծխելուց բացի: Իհարկե, երբեմն-երբեմն իջնում են փողոց, խոսում այնտեղ հավաքված քաղաքացիների հետ, ասում նրանց, որ խորհրդարանը ապօրինաբար է գործել, որ իրենք դավաճան չեն, որ շուտով «նրանք բոլորով» քրեական պատասխանատվության են ենթարկվելու, որ Սահմանադրական դատարան են իրենք շուտով դիմելու… Հետո համատեղ՝ 4 խմբակցությունում հայտարարություն են տարածում, համատեղ տեքստեր են մշակում եւ այս ամենն անում են «ժողովրդի անունից»: Իշխանությունն էլ ամեն ինչ անում է «ժողովրդի անունից», ու քանի որ ժողովուրդը սա չի հասկանում, ուրեմն «թյուրիմացության» մեջ է:

Մի տեսակ շատ պարզունակ են իշխանությունն էլ, ընդդիմությունն էլ՝ վաճառված երկրի իշխանություն եւ ընդդիմություն լինելու համար, պարզունակ եւ հանգիստ: Վաճառված երկրում ոչ առաջինը, ոչ երկրորդն իրենց նման կերպ չեն պահում. իշխանությունը բացատրում է, ապացուցում է, ցույց է տալիս, որ ինքը ոչ մեկին երկիր, անկախություն չի վաճառել, ընդդիմությունը չի գնում տուն հրապարակից այնքան ժամանակ, մինչեւ «երկրի վաճառքի մասին փաստաթուղթը» անվավեր չի ճանաչվում: Մեր երկրում ոչ առաջինը կա, ոչ երկրորդը:

Բա ժողովո՞ւրդը: Վաճառվող երկրի քաղաքացիները մի քանի հարյուրով կամ հազարով չէ, որ հավաքվում են՝ բողոքելու վաճառքի փաստի դեմ: Սա, հիշեցնենք, այն ժողովուրդն է, որը հրապարակներ էր լցնում՝ ընտրություններում պարտված թեկնածուների, կուսակցությունների պատվին: Կասեք՝ բերո՞ւմ էին, է, ո՞վ է խանգարում հիմա էլ բերել մարզերից, գյուղերից հազարներին, տասնյակ հազարներին, հարյուր հազարի, բերել ու կանգնեցնել Բաղրամյանում: Նախադեպը կա, չէ՞, մարդկանց ավտոբուսներով իրենց հանրահավաքներին բերել են, չէ՞: Հիմա, երբ նույն ռեսուրսներն ունեցողները չեն բերում, ուրեմն կարելի է եւ եզրակացնել, որ կամ երկիրն ամենեւին էլ չի վաճառվել, կամ այսպես կարծողներին ձեռնտու է, որ երկրի վաճառքի փաստը մնա, որպեսզի իրենք միշտ էլ խոսելու բան ունենան:

Այնինչ եթե երկիրը վաճառվել է, ուրեմն քնել չի կարելի, կամ կարելի է, բայց միայն հրապարակներում, ոչ թե սուպերմարկետների հերթերում՝ ամանորյա գնումներ կատարելիս:

Լավ, իշխանությունը հանցագործություն է կատարել, վաճառել է այն, ինչը չէր կարելի վաճառել, բայց ո՞վ է կամ ո՞ւր է դրա դեմ պայքարողը, դա թույլ չտվողը: Կասեք՝ պարբերաբար, ամեն օր այդ մասին խոսո՞ւմ են, բայց խոսողն ուրիշ է՝ բնավորությամբ, գործունեության ձեւով, պայքարողն ուրիշ է:

Կողմնորոշվենք ի վերջո՝ հիմա վաճառվե՞լ ենք, եթե այո, ապա ինչո՞ւ ենք վերադառնում տուն ամեն երեկոյան, որտեղ տաք է, որտեղ տաք կերակուր կա եւ հարմար քնելատեղ: Եթե չենք վաճառվել, այսպես էլ ասենք՝ առանց այդ էլ սուտը շատ այս մեր երկրում:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Թանկ գազ «Հայռուսգազարդի» 20 տոկոս բաժնեմասով, թե՞ էժան գազ առանց այդ բաժնեմասի

1-ին էջից

Վերեւում նշած պայմանագրի վավերացման շուրջը ամբողջ «կռիվն» այն էր, որ Հայաստանը չպետք է «Հայռուսգազարդի» 20 տոկոս բաժնեմասը զիջեր «Գազպրոմին», ինչն, ըստ դրան դեմ արտահայտվողների, երկրի ինքնիշխանության զիջում էր: Հիշեցնենք, որ այդ 20 տոկոսը ռուսական կողմին փոխանցվեց այն պատճառով, որ սպառողների համար գազի սակագինը շուրջ երկու տարի մնացել է անփոփոխ, մինչդեռ ռուսական կողմը Հայաստանին գազը մատակարարել էր նոր, ավելի բարձր գնով: Հայաստանի Հանրապետությունը պարտք էր մնացել բարձրացված սակագնի չափի մի մասով, որը կազմել է 300 մլն դոլար, իսկ մյուս մասն էլ ռուսական կողմն էր իր վրա վերցրել՝ մինչեւ վերջնական որոշման գալը:

Ի՞նչ պետք է աներ Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ նրանից, թե ո՞վ կլիներ երկրի նախագահը եւ ովքե՞ր կլինեին կառավարության անդամներ: Մեր երկիրը տվյալ դեպքում ունի երկու տարբերակ:

Տարբերակ առաջին՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունը բանակցություններ չի վարում ռուսական կողմի հետ, համաձայնում է նրա կողմից առաջարկվող գազի նոր սակագնին, որը մոտ 30 տոկոսով ավելի բարձր էր ներկայիս սակագնից: Այս դեպքում, բնականաբար, ոչ մի 300 մլն դոլար պարտք էլ չէր կուտակվում եւ «Հայռուսգազարդի» 20 տոկոսի հարց էլ չէր առաջանում: Մենք ունենում էինք ոչ միայն սահմանին մատակարարվող գազի 30 տոկոսով բարձր սակագին, այլեւ մեր բնակարաններում եւ ձեռնարկություններում այրվող գազի՝ այդ 30 տոկոսից էլ ավելի բարձր սակագին, քանի որ ավելի բարձր արժեքով ապրանքից գանձվող հարկերն էլ տոկոսային առումով ավելի բարձր են լինում:

Տարբերակ երկրորդ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նկատի ունենալով գազի գնի կենսական նշանակությունը բնակչության եւ տնտեսության համար, բանակցում է Ռուսաստանի հետ ավելի էժան գազ ձեռք բերելու ուղղությամբ եւ հանգում որոշակի պայմանավորվածության՝ ինչ-որ բան զիջելով դրա դիմաց:

Այսինքն, տվյալ դեպքում տեղի է ունեցել երկրորդ տարբերակը: Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի եւ բնական գազն իր արտադրության մեջ օգտագործող գործարար կարող է դատողություններ անել, թե ո՞րն է ավելի ձեռնտու տարբերակը՝ ավելի բարձր գնով գազ «Հայռուսգազարդ» ընկերության 20 տոկոս բաժնեմասով, թե՞ ավելի էժան գազ առանց այդ բաժնեմասի: Սա է հիմնական հարցը: Մնացածը քաղաքական պայքար, շահարկումներ, դատարկաբանություններ են, որին, բացի քաղաքական ընդդիմությունից, մասնակցում են Արեւմուտքից «քաղաքացիական հասարակության ձեւավորման» համար ֆինանսավորվող կազմակերպությունների աշխատակիցները, հեռուստատեսությամբ գռեհիկ հումորով հայտնի շոու բիզնեսի ներկայացուցիչը, մասամբ նաեւ ամբոխային քարոզչության ազդեցության տակ գտնվող եւ գործընթացից այնքան էլ լավ պատկերացում չունեցող մարդիկ:

Ի դեպ, փաստը, որ սոցիալական ցանցերով մի քանի օր շարունակվող՝ երեկվա ցույցին միանալու կոչերից ու հորդորներից հետո, խորհրդարանի մոտ բողոքի ակցիային մասնակցում էին ընդամենը մի քանի հարյուր մարդ, խոսում է այն մասին, որ բնակչության գերակշիռ մեծամասնության համար ավելի ճիշտ տարբերակը էժան գազ ունենալն է եղել, քան թե «Հայռուսգազարդի» 20 տոկոսի պատկանելության հարցը:

Չենք ուզում այստեղ խոսել, թե ընդհանրապես հայկական կողմն ինչպե՞ս է դարձել «Հայռուսգազարդ» ընկերության բաժնետեր, ի՞նչ է ներդրել (ոչ գումարային իհարկե) այդ բաժնեմասում եւ որքանո՞վ է դա համարժեք ռուսական կողմի ներդրումներին՝ իր բաժնեմասը ձեռք բերելուց առաջ եւ հետո: Չենք ուզում խոսել, քանի որ այդ դեպքում թվերն ու ցուցանիշները մեր օգտին չեն լինի:



# Գազային համաձայնագրերը…

1-ին էջից

**Լրագրողները նաեւ հարվածում էին լրագրողական օթյակի ապակիներին՝ գոռալով. «Մի քվեարկեք»: Իսկ մի քանի լրագրողի էլ հաջողվել էր հայտնվել ուղիղ ԱԺ ամբիոնի մոտ՝ «Խելքի եկեք, արա» պաստառով: Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը մտահոգվեց, թե ապակիները կկոտրվեն եւ անվտանգության աշխատակիցներն հորդորեց լրագրողական օթյակներում կարգուկանոն հաստատել:**

**Մինչ այդ հատուկ գազային համաձայնագրերը քվեարկությամբ վավերացնելու համար գումարված նիստի սկզբում վարման կարգի վերաբերյալ ձայն էր վերցրել «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը, ով տեղյակ պահելով, որ ԱԺ դարպասի մոտ համաձայնագրերի վավերացման դեմ բողոքի գործողություն է իրականացվում, զգուշացրեց, թե բոլոր այն պատգամավորները, որ կողմ կքվեարկեն՝ կհամարվեն դավաճաններ: ԱԺ նախագահն ապստրեց անջատել հռետորի խոսափողը: Իսկապես՝ ԱԺ դարպասների մոտ էլ, պատգամավորական մուտքի մոտ էլ բավական մարդաշատ բողոքի գործողություններ էին: Իսկ բուն՝ ԱԺ դահլիճում մի տեսակ կարծես խառնաշփոթ էր, տեղերից բացականչություններ, լրագրողների օթյակից աղմուկ եւ կոչեր, Հովիկ Աբրահամյանը հանգստության կոչ էր անում իր ամբիոնից՝ փորձելով դահլիճն ուղղորդել դեպի քվեարկություն:**



**Ընդդիմադիր ՀԱԿ խմբակցությունը, ի դեմս Լեւոն Զուրաբյանի, քվեարկությունից առաջ քաան րոպե ընդմիջում վերցրեց, ու ահա այդ ժամանակ «Ժառանգություն» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը մի անհավանական տրյուկ, մի անլսելի գործողություն իրականացրեց՝ մեկ մեկ վերցնելով ՀՀԿ խմբակցության անդամների՝ էլեկտրոնային քվեարկության համար նախատեսված քարտերը: Երբ ընդմիջումից հետո ՀՀԿ-ականները տեսան, որ էլեկտրոնային քվեարկության քարտերը չկան, ԱԺ նախագահը հայտարարեց, որ երբ համակարգը չի աշխատում, աշխատում է հաշվիչ հանձնաժողովը: Այսինքն՝ պետք է քվեարկել հնագույն մեթոդով՝ ձեռքը բարձրացնելով: Իսկ Փոստանջյանին էլ խնդրեց քարտերը վերադարձնել. «Պատգամավորներ ունենք էստեղ նստած, որ մտավոր կարողություններ չունեն, այլընտրանք չունեն ու խարդախությամբ են փորձում մեր աշխատանքները տապալել», ասաց նա: Ընդդիմադիր պատգամավորները տեղերից կոչեր էին հնչեցնում անջատած խոսափողերով, ապա դուրս եկան դահլիճից՝ քվեարկելու թողնելով միայն մեծամասնությանը: Ու այդ պահին մեծամասնությունը քվեարկեց ձեռք բարձրացնելով, հաշվիչ հանձնաժողովը հաշվեց, հայտարարվեց՝ 77 կողմ, գազային համաձայնագիրն այդ կերպ վավերացված էր: Ավելի ուշ՝ ընդմիջում հայտարարելուց հետո, երբ բյուջեում գազային համաձայնագրին համապատասխանեցվող փոփոխություն էր արվում, Հ. Աբրահամյանը ճշտեց կողմ քվեարկողների թիվը՝ 72, բացատրելով, որ տեխնիկական պատճառով սխալ հաշվարկ է եղել:**

**Իսկ ընդդիմադիր խմբակցությունները հայտարարեցին, թե գազային համաձայնագրի քվեարկությունը խախտումներով է իրականացվել, քանի որ յոթ անձից կազմված հաշվիչ հանձնաժողովի չորս անդամ բացակայել են:**

**Մեծամասնությունից Դավիթ Հարությունյանը, որ ավելի վաղ մտահոգություններ էր հայտնել համաձայնագրերի վերաբերյալ, լրագրողներին հայտնեց, որ նույնպես կողմ էր քվեարկել, քանի որ համաձայնագրում դրականն ավելի շատ է եղել: Նա նշեց, որ իր դիտարկումները հետագայում հաշվի կառնվեն ու պայմանագրի դրույթները կփոփոխվեն:**

**Իսկ քվեարկության մասին էլ ասաց, որ օրենքի խախտում տեղի չի ունեցել, քանի որ հաշվիչ հանձնաժողովը հաշվում է միայն: Իհարկե, կան դեպքեր, երբ հաշվիչ հանձնաժողովը որոշում է կայացնում (տեխնիկական կողմը նկատի ուներ), բայց բուն որոշումը կայացնում է ԱԺ-ն, իսկ որոշումն անցա՞վ, թե՞ չանցավ՝ տվյալ դեպքում որոշում է նիստը նախագահողը:**

**Իսկ որ ընդդիմությունն ասում է, թե կդիմի Սահմանադրական դատարան՝ համաձայնագրի վավերացման օրինականության հարցով, Դավիթ Հարությունյանը հիմքեր չտեսավ դրա համար ոչ բովանդակային, ոչ ՍԴ օրենսդրության առումով:**

**Մինչդեռ ընդդիմադիրները շարունակում էին պնդել խախտումներով քվեարկությունների վերաբերյալ, անգամ հայտարարություն տարածեցին, թե՝ էլեկտրոնային համակարգի չգործելու դեպքում որոշումներն ընդունվում են հաշվիչ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ՝ տվյալ դեպքում չորս անդամ էր հարկավոր, մինչդեռ երեքն են ներկա եղել: Բացի այդ, ըստ ընդդիմադիրների, սահմանված կարգով քվեարկության արդյունքները պետք է հաստատվեն հաշվիչ հանձնաժողովի անդամների կողմից որոշում ընդունելով եւ արձանագրությամբ, ինչը նույնպես տեղի չի ունեցել , այսինքն՝ համաձայնագիրը վավերացված չէ:**

**Այսպես թե այնպես, գազային համաձայնագրերը Հայաստանին նեղ ու կախյալ դրության մե՞ջ են գցում, թե՞ ճանապարհ են հարթում դեպի Մաքսային միություն, ստուգելու մի տարբերակ կա՝ ապրել եւ տեսնել:**

## Հայի հոգին

# Անծանոթ Մոնկտոն քաղաքի Հայկական փառատոնը...

### *Ինչպես մի անհատ կարող է անել անկարելին*

Անծանոթ հեռախոսազանգ էր, միջազգային համարով: Կնոջ ձայն էր, Կանադայի Մոնկտոն քաղաքից, Սիլվիա Գասպարյանը: Անմիջապես ներողություն խնդրեց, որ իր հայերենը կատարյալ չէ: Բայց շատ շուտ պարզվեց, որ եւ իր հայերենն էր կատարյալ, եւ իր հայեցի ինքնությունը: Դիպվածով հայտնաբերել էր ինձ, իմացել, որ Ազնավուրի երգերը թարգմանել եմ հայերենի ու հեղինակել մի ալբոմ: Հրավիրում էր ինձ մասնակցելու Մոնկտոնի 5-րդ Հայկական փառատոնին, որն այս տարի նվիրված էր Շառլ Ազնավուրին:

Մոնկտոնը Կանադայի հարավ-արեւելքում է, ծովամերձ Նյու Բրունզվիկում՝ Կանադայի միակ երկլեզու նահանգը: Դա նախկին ֆրանսիական Ակադիան է, որ գոյություն է ունեցել 17-18-րդ դարերում: Տպավորված հնդկացի բնիկների հյուրասիրությամբ ու ազնվությամբ, ֆրանսիացի գաղութարարները տեղանքը անվանել են Ակադիա, նմանեցնելով հունական Ակադիային, որի մասին երգել են անտիկ պոետները: 18-րդ դարի սկզբում Ակադիան անցնում է բրիտանացիներին, նույն դարի երկրորդ կեսին սկսվում է ակադիացիների տեղահանումը: Այսօր այդ նահանգը, 750 000 բնակչությամբ, բաղկացած է անգլախոսներից ու ֆրանսախոսներից. վերջիններս հայրենադարձած ակադիացիներն են, որոնք իրենց ինքնության հոգեբանությամբ շատ ընդհանուր եզրեր ունեն այն հայերի հետ, որոնք էրգիր են կորցրել:



Սիլվիա Գասպարյանը փոքր տարիքում Լիբանանից տեղափոխվել է Ֆրանսիա եւ այժմ, ավելի քան երկու տասնյակ տարիներ, ամուսնու եւ զավակների հետ ապրում է Մոնկտոնում եւ դասավանդում նույնանուն համալսարանում: 2005 թվականին Սիլվիան մտահղացել է ու կազմակերպել Մոնկտոնի Հայկական փառատոնը, որն իր գործունեությունը ծավալում է երկու տարին մեկ, նպատակ ունենալով հայկական մշակույթը տարածել ու ներկայացնել օտարներին եւ՝ բացառապես օտարներին, քանի որ այդ քաղաքում ընդամենը չորս հայ ընտանիք է ապրում: Այն, անշուշտ, կանադական տարբեր մշակութանպաստ հաստատությունների կողմից քաջալերվում է եւ օժանդակվում: Յուրաքանչյուր փառատոն ներկայացնում է հայոց պատմության, մշակույթի տարբեր բնագավառներ, տարբեր շերտեր, եւ այս անգամ նվիրված էր հայ մեծանուն Շառլ Ազնավուրին, ընդգրկելով 7-օրյա հանդիսություններ (հոկտեմբերի 3-10, 2013)՝ դասախոսություն Ազնավուրի մասին, Ազնավուրը կինոյում, երգչի հրատարակած գրքերի եւ լուսանկարների ցուցահանդես, իր հեղինակած «Մի դռնից մյուսը» գրքի բեմականացումը ու եզրափակիչ մեծարման համերգը քաղաքի ամենաշքեղ ու հեղինակավոր դահլիճում, որին մասնակցելու էին ֆրանս-կանադացի երգիչ-երգչուհիներ:

Փառատոնին մասնակցելու հրավերն ինձ անակնկալի բերեց: Չգիտեի ինչ պատասխանել, ինչ որոշում կայացնել: Իմ ու Սիլվիայի հեռախոսազրույցն ավարտվեց այն պայմանավորվածությամբ, որ ես կուսումնասիրեմ փառատոնի կայքը (www.festivalarmenien.com), կմտածեմ առաջարկի մասին ու երկու-երեք օրվա ընթացքում կհայտնեմ իրենց իմ որոշումը:

Երկմտանքիս պատճառները մի քանիսն էին: Նախ այն՝ որ Սիլվիան շատ ուշ էր տեղեկացել իմ մասին, եւ ինձ մնում էր ընդամենը երկու շաբաթ նախապատրաստվելու համար՝ ե՛ւ երգելու առումով, ե՛ւ հոգեբանորեն: Մանավանդ երբ ուսումնասիրեցի կայքը ու տեսա, որ համերգին մասնակցում են ինձ ծանոթ, ֆրանսիական երգի աշխարհում հայտնի դեմքեր՝ Մարի-Ժո Թերիոն եւ Լինա Բուդրոն: Նրանց ներկայությունը ինձ ե՛ւ հրապուրում էր, ե՛ւ սթափեցնում: Շարունակելով երգիչների ցանկը՝ մասնակցում էին եւս երեք հոգի՝ Սանդրա Լը Կուտրը, Միշել Կարտանսիեն՝ սիրված ակադացի անուններ, եւ հայազգի Սերժ Պեստրոյանը՝ Մոնրեալից: Բոլորն էլ, փաստորեն, իրենց արվեստին ու արհեստին վարժ, երգով ապրող արվեստագետներ էին, ի տարբերություն ինձ: Իհարկե, ինչ-որ ձեւով, ես եւս միշտ երգի հետ եմ՝ ստեղծագործելով, երգերս մերթընդմերթ փոքր շրջանակներում ներկայացնելով կամ հրատարակության պատրաստվող ալբոմների ձայնագրությամբ, բայց այս կարգի երգիչ-երգչուհիների հետ բեմ բարձրանալու հանգամանքը շատ պատասխանատու էր: Բացի այդ՝ Մոնկտոնում, ուր չկար հայ համայնք, ո՞ւմ համար էի հայերեն լեզվով Ազնավուր երգելու: Ո՞վ էր ինձ լսելու, երբ Ազնավուրի երգերն իրենց բնօրինակ լեզվով լսելու այդպիսի մեծ ընտրություն կար: Ինչպե՞ս էի հասնելու Մոնկտոն, որտե՞ղ էի իջեւանելու՝ կային նաեւ այսպիսի մտահոգություններ: Թեեւ Սիլվիան ակնարկել էր, որ կհոգան այդ հոգսերը, այնուամենայնիվ ինձ անիրական էր թվում, որ փառատոնից երկու շաբաթ առաջ հնարավոր կլիներ ապահովել ինձ ընդգրկելու համար անհրաժեշտ պայմանները՝ ճանապարհի, կեցության, նվագակցության:

Համաձայնեցի:

Նյու Յորք - Օտտավա - Մոնկտոն: Սիլվիայի ամուսինը՝ Վարդան Չոլաքյանն էր եկել ինձ դիմավորելու: Վարդանը՝ մասնագիտությամբ մաթեմատիկոս, նույն Մոնկտոնի համալսարանում է դասախոսում: Ժպտերես, խոսուն՝ աչքերով ու ասելիքով:

Ճանապարհին զրուցելով ծանոթացանք իրար, եւ անմիջապես երեւաց, որ նա զտարյուն հայ ընտանիքից է սերում՝ իր համար շատ կենսական են իր ազգային արժեքները, որոնք փոխանցում է իր զավակներին, նույնիսկ այդ մենավոր պանդխտության մեջ: Ինչ վերաբերում է իր կնոջ կազմակերպած Հայկական փառատոնին, Վարդանը փոքրինչ կրավորական մոտեցում ուներ, որովհետեւ այն, ինչ Սիլվիան է անում՝ իր համար չափից ավելի անիրական է թվում, չի պատկերացնում, թե ինչպես է դա արվում, եւ ինչու է անում: Բնականաբար, նման վիթխարի նախաձեռնությունների հետեւում, երբ պատասխանատվությունը հիմնականում մի հոգու վրա է, տվյալ դեպքում՝ Սիլվիայի անելիքները բազմաթիվ են, բազմաթիվ են նաեւ ձախողման վտանգները՝ բարոյական, նյութական, որոնց ծանրությունը դարձյալ դու ինքդ ես կրում:

... Ինձ տեղավորեցին մի գողտրիկ պանդոկում՝ «Քնած Գեղեցկուհին», որտեղ երեք օր գիշերեցի:

Երկու-երեք ժամ անց, երեկոյան, Սիլվիան եկավ, որ գնանք փորձի: Մեզ էին սպասում նվագախումբը, Ջեսի Մեայի ղեկավարությամբ, ինչպես նաեւ «Ակադիայի պատանի երգիչներ» համույթը, որոնց հետ եզրափակիչ համերգի բոլոր մասնակիցները կատարելու էին «Ավե Մարիա» երգը: Այնտեղ էր նաեւ Անժել Բերտենը, գեղարվեստական ղեկավարը, որ մեծ փորձ ունեցող արվեստագետ է, շատ հմուտ՝ իր մասնագիտության մեջ, եղել է աշխարհի բոլոր ծագերում, շատ հայտնի երգիչ-երգչուհիների հետ: Այնքան տպավորիչ ու հուզումնալից էր ինձ համար այնտեղ մեզ սպասող դեռատի երգչուհիների ներկայությունը, իրենց կիրթ, վայելուչ պահվածքով, որը, կարծես, ավելի ու ավելի հազվագյուտ երեւույթ է դարձել աշխարհում: Նվագախմբի հինգ երաժիշտներն արդեն պատրաստել ու սերտել էին մեր երգերը, փորձը սահուն անցավ, մեզ վստահություն ու լավատեսություն հաղորդելով հաջորդ օրվա համերգի համար:

Գիշերը, պանդոկում, ինչպես անում եմ սովորաբար տանը, միացրի հեռուստացույցը, որ ինձ օրորի, ու ես, վերջապես, ավելի քան 24-ժամյա անքնությունից հետո կարողանամ քնել: Քիչ անց դուռս թակեցին: Կից սենյակի կենվորն էր, խնդրում էր, որ ձայնը իջեցնեմ: Ներողություն խնդրեցի ասելով, որ արդեն իջեցրել եմ: Շատ անհարմար զգացի, որ իմ քնելու սովորույթներին գերի, խանգարել եմ նրա քունը: Հետո պառկած, կեսքուն-կեսարթուն, մտքիս մեջ պտտվող օրվա դեմքերն ու տպավորությունները, հաջորդ օրվա մտահոգություններս՝ ելույթիս մասին, առաջին անգամ մեծաքանակ օտար հանդիսատեսին հայերեն լեզվով Ազնավուր ներկայացնելու մասին - կարծեմ, այնուամենայնիվ, կարողացա մեկ թե երկու ժամ քնել:

Կեսօրվա կողմ Սիլվիան եկավ ու գնացինք Կապիտոլի դահլիճը, որտեղ երեկոյան ժամը 8-ին լինելու էր համերգը: Կրկին փորձ, բարձրախոսների ու լուսարձակների կարգավորում, բեմախորքի էկրանին գունային ու պատկերային խաղերի ձեւավորում՝ Անժել Բերտենի ցուցումներով: Ես համերգներ ունեցել եմ տարբեր առիթներով, տարբեր քաղաքներում, մեծ կամ փոքր դահլիճներում, մասնագիտացված տեխնիկական ու երաժշտական աշխատակազմի առկայությամբ, բայց երբեք չէի եղել մի իրավիճակում, երբ ամեն ինչ նախապատրաստվում էր նման մանրակրկիտ ճշգրտությամբ՝ յուրաքանչյուր երգչի ձայնին համապատասխան ընտրված անվանակիր միկրոֆոններից մինչեւ բեմահարդարման 15 հոգուց բաղկացած անձնակազմի եռուզեռը՝ լավագույնս ապահովելու համար ձայն, լույս, պատկեր, բեմական մուտք ու ելք:

Երեկոյան դահլիճը բերնեբերան լեցուն էր: Լեցուն էր ոչ միայն քանակով, այլեւ էությամբ: Հանդիսատեսը գիտեր, թե ուր է եկել եւ ինչու է եկել, գիտեր, թե Ազնավուրյան աշխարհում - որի մասին առաջինը պատմեց Մարի-Ժո Թերիոն «Ինքնակենսագրություն» երգով - ուր է գնալու եւ մանավանդ՝ ուր կուզենար գնալ: Հաջորդը իմ ելույթն էր: Ներկայացա՝ ասելով, որ հայ եմ՝ ինչպես Ազնավուրը: Ասացի, որ ըստ Աստվածաշնչի մեկնության, ըստ էության՝ բոլորս նույն տեղից ենք սկսվում, ուստի իրենք նույնպես հայ են: Բայց շատ քչերը գիտեն հայերի մասին ու նրանց երկրի: Թեեւ շնորհիվ Ազնավուրի համաշխարհային փառքի, գոնե վերջերս, երբ հարցնում են մեր ազգության մասին եւ երբ ասում ենք՝ հայ ենք, պատասխանը լինում է՝ ինչպես Ազնավո՞ւրը: Ասացի, որ երգելու եմ մի լեզվով, որը իրենց անծանոթ է, բայց, ինչ փույթ՝ այդ երգը իրենք լավ կճանաչեն: Եվ սկսեցի հայերեն՝ «Տարեք ինձ այնտեղ» - անմիջապես զգացի, որ մենք միասին ենք գնում այնտեղ, որ ես իրենց եմ տանում, իրենք՝ ինձ, 90-ամյա Ազնավուրը՝ մեզ:

«Acadienouvelle» օրաթերթում հաջորդ օրը եղան դրվատանքի խոսքեր փառատոնի, համերգի, մասնակիցների, ելույթների մասին: Առանց նպատակ ունենալու մասնավորեցնել, այնուամենայնիվ, կուզենայի մեջբերել այն հատվածները, որտեղ խոսվում է Ազնավուրի երգերի հայերեն կատարման մասին, գուցե նաեւ այն պատճառով, որ դրանց մեջ գտա իմ մինչմոնկտոնյան մտորումների պատասխանը՝ եթե չկա հայ համայնք, ո՞ւմ համար էի հայերեն լեզվով Ազնավուր երգելու, եւ ո՞վ էր ինձ լսելու, երբ Ազնավուրի երգերն իրենց բնօրինակ լեզվով լսելու այդպիսի մեծ ընտրություն կար:

«/.../ Հատկապես հիշատակման է արժանի Տարեք ինձ այնտեղ երգը հայերեն, որից փշաքաղվեցի ... Երեկոյի ընթացքում հաստատապես աչքի ընկան Պերճ Թյուրաբյանի հայերեն լեզվով Ազնավուրի երգերի կատարումները)

Համերգը շարունակվեց եւ իրար հաջորդելով երգեցին բոլոր այն երգիչները, որոնց անունները նշել եմ վերեւում, հանդիսատեսի մասնակցությամբ ու ծափողջյունների ներքո: Մի առանձին օվացիայի արժանացավ համերգը եզրափակող «Ավե Մարիա» երգը մենակատարների ու երգչախմբի կատարմամբ: Եվ վերջապես, դահլիճի տեղատարափ ծափերի տակ, իր փակման խոսքն ասաց Սիլվիա Գասպարյանը, շնորհակալություն հայտնելով բոլոր մասնակիցներին, որոնք անշահախնդիր, բարեսիրական հիմունքով մասնակցել էին փառատոնին, եւ այն փոքրիկ քաղաքի մեծ ու մեծաքանակ հանդիսատեսին, որ եկել էր մասնակցելու եւ նվիրաբերելու իր ակադիական սերն ու ոգին հայ ոգու հանդեսին:

Եվս մի միջադեպ, որ անկեղծ գնահատականն է այդ երեկոյի: Համերգից հետո, ինչպես ընդունված է, լինելու էր հավաքույթ: Հյուրասիրության գնալուց առաջ մտել էի պանդոկ: Միջանցքում դեմս դուրս եկավ այն հարեւանս, որի քունը խանգարել էի մի օր առաջ: Արդեն հետաքրքրվել-իմացել էի, որ Օսլոյից հրավիրված դասախոս է: Դանդաղեցրի քայլս, մտածելով, որ պատեհ է մի անգամ եւս ներողություն խնդրելու աղմկելու համար: Բայց ինձ տեսնելով, նա ինքը ժպտալով արագ մոտեցավ ինձ ու ասաց. «Ես ներկա էի համերգին, հրաշալի էր, հպարտ եմ, որ ձեր հարեւանն եմ, շնորհակալություն»:

Այդ գիշեր, ինչպես նաեւ հաջորդ օրը, հավաքվեցինք բոլոր մասնակիցներով նշելու փառատոնի ակներեւ հաջողությունը եւ արժեւորելու այն աննկարագրելի աշխատանքը, որ անում է Սիլվիա Գասպարյանը՝ լիբանանցի, փարիզցի, մոնկտոնցի հայուհին, որը իր տեսլականը ունի ու այն իրականություն դարձնելու տաղանդ՝ հանուն հայ մտքի, ոգու հարատեւման:

Ավելացնեմ նաեւ, որ Սիլվիան փոքր տարիքում պարի կրթություն է ստացել եւ անգամ երազել է պարուհի դառնալ, բայց փոխարենը դարձել է լեզվաբան: Նույն փառատոնի օրերին, բացի կազմակերպչական աշխատանքից, նա նաեւ իր պարելու արվեստն է ընծայել այդ յոթնօրյա հանդեսներին: Փառատոնի բացման օրը, տասը պարող- պարուհիներով ներկայացրել էին Ազնավուրի բանաստեղծություններով, մեղեդիներով ու կյանքի դրվագներով ներշնչված պարային մի բեմադրություն, որի մասին նույն «Acadienouvelle»-ը գնահատանքի ջերմ խոսքեր էր գրել մի առանձին հոդվածով:

Ահա այսպիսին էին Մոնկտոնի Հայկական փառատոնի օրերը, իմ օրերը, որոնք ջերմ էին, ի՜նչ լավ է, որ եղան: Ջերմ էր աշնանային Մոնկտոնն իր հյուսիսային գեղեցկությամբ: Ջերմ էին հավաքույթները՝ լի երգով, նվագով, պարով, առատ՝ կերուխումով: Անսկիզբ ու անվերջ էր Ազնավուրի երգերի շարանը, որոնք հնչում էին այդ օրերին բոլոր մասնակիցների շուրթերից: Հուզիչ էին Ակադիայի ժողովրդական երգերը, որ գիտեին ու մի մարդու պես երգում էին բոլորը: Նախանձելի էր մարդկանց կապը իրենց ակունքների հետ: Հուզիչ էր տեսնել ոգեղեն աշխարհների մերձեցումը, եւ այս ամենի մեջ Սիլվիային՝ ժպտերես, լավատես, ոգեշունչ՝ հայ մարդուն ու աշխարհը իրար բերելու, արժեքները մի քիչ ավելի ճանաչելի դարձնելու, մշակույթները պահելու-պահպանելու կամավոր ստանձնած իր առաքելությամբ:

Ի վերջո, այս ամենը ի մի բերելով, կարող եմ ասել, որ ամենակարեւոր բանը, որ հասկացա, այն է, որ երբեմն մի անհատ, մեն մի անհատ, կարող է անել անկարելին:

**ՊԵՐՃ ԹՅՈՒՐԱԲՅԱՆ**
**Նյու Յորք**

# Ծոցի երկրների միացյալ հրամանատարությունը կունենա 100 հազար զինվոր



Պարսից ծոցի պետությունների փոխգործողության խորհուրդը օրերս որոշել է ստեղծել միացյալ հրամանատարություն: Այս կապակցությամբ Սաուդյան Արաբիայի ազգային գվարդիայի նախարար, արքայազն Միթեբ բին Աբդուլլահը կիրակի օրը հայտարարել է, որ միացյալ հրամանատարությունը պետք է ունենա 100 հազար զինվոր:

«Ալլահի օգնությամբ այդ հրամանատարությունը կստեղծվի արդեն մոտ ժամանակներս: Եթե հարկ լինի, ազգային գվարդիան նույնպես կմասնակցի դրան», հայտարարել է թագավորական ընտանիքի անդամը, որի խոսքը մեջբերում է newsru.co.il կայքէջը: Միթեբ բին Աբդուլլահը ավելացրել է, որ Պարսից ծոցի երկրների միասնականությունը տարածաշրջանային քաղաքականության կարեւոր կայունարար գործոն է:

Խորհրդի կազմի մեջ մտնում են Սաուդյան Արաբիան, Բահրեյնը, Քուվեյթը, Օմանը, ԱՄԷ-ն եւ Քաթարը: Միացյալ զինվորական հրամանատարություն ստեղծելու որոշումից բացի, խորհուրդը մտադրվել է բացել միասնական զինվորական ակադեմիա եւ ռազմական դոկտրինայի մշակմամբ զբաղվող գիտահետազոտական ինստիտուտ:

Միացյալ հրամանատարության նախնական կառույցը՝ Արաբական թերակղզու ինքնապաշտպանության ուժերը, ստեղծվել էր 1982-ին՝ խորհրդի կազմավորումից 1 տարի անց: Սկզբնական շրջանում միացյալ հրամանատարությունն ուներ 5 հազար զինվոր: Ներկայումս զինծառայողների թվակազմը հասել է 30 հազարի:

Խորհուրդը համադաշնային պետության վերածելու Սաուդյան Արաբիայի փորձերն առայժմ հաջողությամբ չեն պսակվել: Սակայն վերջերս սկսված ԱՄՆ-Իրան մերձեցման պայմաններում (Իրանը սաուդցիների գլխավոր հակառակորդն է) ինտեգրման տեմպերը զգալիորեն արագացել են:

## Բոստոնի բուժքույրական քոլեջի հայ դեկանը

Մասաչուսեթս համալսարանի (Բոստոն) բուժքույրական եւ Առողջապահական գիտությունների քոլեջի նոր դեկան է նշանակվել դոկտ. Անահիտ Տեր-Վարդանյան-Կուլվիկին:

Ըստ «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի հաղորդագրության, հայազգի դոկտ. Կուլվիկին բնիկ լիբանանցի է: Մեծացել է Այնճարում: Հաճախել է տեղի հայկական ավետարանական դպրոցը եւ այնուհետեւ ավարտել Բեյրութի ամերիկյան համալսարանը: Տեղափոխվելով Ամերիկա նա նախ



ծառայել է Ուեյն Քաունթիի (Միչիգան) «առողջապահության եւ մարդկային ծառայությունների բաժնում, որպես փոխտնօրեն: Եղել է Ուեյն, Օքլենդ եւ Ֆլորիդայի միջազգային համալսարանների դասախոսական կազմում: Այնուհետեւ տեղափոխվել է Բոստոն եւ նշանակվել դեկան: Նրա ուշադրության կենտրոնում են լինելու հատկապես արաբական երկրներից ներգաղթողներն ու փախստականները: Դոկտորական է պաշտպանել Ինդիանայի համալսարանում: Ամուսնացած է ծագումով լեհ ամերիկացի Մայքլ Կուլվիկիի հետ: Ունի 2 դուստր:

Հ. Ծ.

ՖՐԱՆՍԻԱ-ԱԼԺԻՐ

## Օլանդի անհաջող կատակը՝ դիվանագիտական սկանդալի պատճառ

*Նրա վարկանիշը իջել է 20 տոկոսի*



**Ֆրանսիան փորձում է հարթել երկրի նախագահ Ֆրանսուա Օլանդի մի անհաջող կատակի պատճառով ծագած դիվանագիտական սկանդալը: Ինչպես տեղեկացնում է Global Post էլեկտրոնային հրատարակությունը, նախագահ Օլանդը Հրեական համայնքների ներկայացուցիչների խորհրդի հոբելյանի ժամանակ ելույթ ունենալով՝ հայտարարել էր բառացիորեն հետեւյալը. «Ներքգործնախարար Մանյուել Վալսը ողջ-առողջ վերադարձավ Ալժիրից, իսկ դա արդեն քիչ չէ»:**

**Անցյալ շաբաթ ասված այդ խոսքը տեղ էր գտել ալժիրյան առաջատար թերթերի խորագրերում, իսկ Ալժիրի արտգործնախարար Ռամտանե Լամամրան Օլանդի «ափսոսանքի արժանի» ելույթի կապակցությամբ նշել էր, որ տարին ավարտվում է «վատ նոտայով»: Նա հիշեցրել է, որ Ֆրանսիայի ներքգործնախարարը Ալժիր էր այցելել վարչապետ Ժան-Մարկ Էյրոյի գլխավորած կառավարական պատվիրակության կազմում, եւ որ ալժիրյան այցի ընթացքում ֆրանսիացիների անվտանգությանը ոչինչ չէր սպառնացել:**

**Ալժիրցիների կարծիքով, նմանօրինակ կատակները թյուր պատկերացում են ստեղծում Ալժիրում անվտանգության ոլորտում տիրող կացության մասին եւ վնաս են պատճառում երկկողմ հարաբերություններին:**

**Օլանդի շրջապատում որոշ աղբյուրներ աճապարել էին հայտարարել, թե նախագահը ալժիրցի դիվանագետներին վիրավորելու դիտավորություն չի ունեցել: «Դա պարզապես կատակ էր, եւ որեւէ մեկին, մասնավորապես ալժիրցիներին վիրավորելու նպատակ չի եղել», ասել է մի անանուն պաշտոնյա՝ հույս հայտնելով, որ արդեն մինչեւ տարեվերջ կհաջողվի ուղի գտնել Ալժիրի իշխանությունների հետ հարաբերությունները վերականգնելու համար:**

**Ալժիրի տարածքի մի մասը՝ այսպես կոչված Ֆրանսիական Ալժիրը 1830-1962 թթ. ֆրանսիական գաղութ էր եւ անկախացավ արյունահեղ պատերազմից հետո, որի ընթացքում զոհվեցին մեկուկես միլիոն ալժիրցիներ:**

**1990-ականներին Ալժիրում իշխանությունների եւ իսլամիստների դիմակայության եւ կատաղի բախումների հետեւանքով, ըստ տարբեր աղբյուրների, սպանվեց 100-200 հազար մարդ: Սակայն վերջերս երկրում իրադրությունը կայունացել է. իսլամիստական խմբավորումների մի մասը ոչնչացվել է, իսկ մնացյալները համաներման շրջանակներում անձնատուր են եղել կառավարությանը:**

**Ինչ վերաբերում է բուն Ֆրանսիայում նախագահ Օլանդի հանդեպ գոյություն ունեցող վերաբերմունքին, նոյեմբերին հանրային կարծիքի հետազոտման Ifop ընկերության անցկացրած երկու հարցումների արդյունքները վկայում են, որ նրա ժողովրդականության մակարդակը իջել է աննախադեպ ցածր նիշի: Պետության ներկայիս ղեկավարի քաղաքականությանը հավանություն է տալիս ֆրանսիացիների ընդամենը 20 տոկոսը:**

## Էլչիբեյի ընտանիքը՝ անվճարունակ

Ինչպես հաղորդում է virtualaz.org-ը, օրերս Բաքվի արվարձանային Ռասուլզադե (նախկինում Վորոշիլովի անվան) ավանի Ալիխանով փողոցի թ. 48 առանձնատուն են մտել գազի գրասենյակի աշխատակիցները եւ անջատել գազը: Պատճառն այն է, որ տան բնակիչներն օգտագործած գազի դիմաց ունեն 700 մանաթի պարտք:

Տեղեկատվությունը ոչնչով աչքի չէր ընկնի, հարեւան երկրում նման տասնյակհազարավոր ընտանիքներ կան, եթե խոսքը չվերաբերեր Ադրբեջանի էքս-նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի այրուն, դստերը եւ թոռանը, որոնց նշված հասցեում գտնվող առանձնատունը պատկանում է սեփականության իրավունքով:

Փաստացի, Ռասուլզադե ավանի գազի գրասենյակի աշխատակիցները Ամանորի նախօրյակին Ադրբեջանի էքս-նախագահի ընտանիքին զրկել են տունը ջեռուցելու եւ կենցաղային այլ կարիքներ հոգալու հնարավորությունից:

Խնդիրն այստեղ ունի ընդգծված քաղաքական ենթատեքստ: Բանն այն է, որ Ադրբեջանում ընդունվել եւ գործում է «Նախկին նախագահի մասին» սահմանադրական օրենք: Ըստ այդմ, նախկին նախագահի համար սահմանված է ամսական թոշակ՝ գործող նախագահի աշխատավարձի 70 տոկոսի չափով:

ԱՊՀ երկրներում Ադրբեջանի նախագահն ստանում է ամենաբարձր աշխատավարձերից մեկը՝ ամսական 12 000 մանաթ կամ շուրջ 14 000 դոլար: Էքս-նախագահ Այազ Մութալիբովն ստանում է դրա 70 տոկոսը, ինչպես նաեւ նրան տրվել են մերձքաղաքային առանձնատուն, ծառայողական մեքենա, թիկնապահ: Օրենքով սահմանված է, որ էքս-նախագահի մահվան դեպքում նրա այրին կարող է միայն ստանալ թոշակ՝ էքս-նախագահի թոշակի 60 տոկոսի չափով:

Այսպիսով, ըստ օրենքի Էլչիբեյի այրին պետք է ստանա ամսական մոտ 5 000 դոլար թոշակ: Նման եկամուտ ունենալու դեպքում Էլչիբեյի ընտանիքը հազիվ թե գազի դիմաց ունենար 700 մանաթի պարտք: Այո, բայց բանն այն է, որ Էլչիբեյի այրին հրապարակավ հրաժարվել է օգտվել էքս-նախագահի այրու համար օրենքով սահմանված արտոնություններից, «քանի դեռ իշխանությունները պատշաճ ձեւով չեն հարգի Աբուլֆազ Էլչիբեյի հիշատակը»:

Ի տարբերություն Այազ Մութալիբովի, որ հանուն նախագահական թոշակի, առանձնատան եւ այլ արտոնությունների գլուխ է խոնարհել Իլհամ Ալիեւի առաջ եւ ամեն տարի Հեյդար Ալիեւի ծննդյան եւ մահվանը օրը դպրոցականի պարտաճանաչությամբ ծաղկեպսակ է դնում «համազգային առաջնորդի» գերեզմանին, Էլչիբեյի այրին երբեւէ հրապարակային հայտարարություն չի արել Ադրբեջանում իշխող վարչախմբի լեգիտիմության, առավել եւս՝ Հեյդար Ալիեւի «փրկչական առաքելության» մասին:

Եվ ամեն անգամ իշխող վարչախումբը էքս-նախագահի այրուն պատժում է՝ մերթ էլեկտրականությունը, մերթ էլ գազը անջատելով: Նպատակը մեկն է՝ կենցաղային անհարմարություններ, անտանելի կենսապայմաններ ստեղծել, որպեսզի Էլչիբեյի այրին եւս «կոտրվի» եւ «ծնկի գա»: Իսկ նա համառորեն դիմադրում եւ տեղի չի տալիս: Անցյալ տարի ադրբեջանական լրատվամիջոցներից մեկին հարցազրույց էր տվել Էլչիբեյի որդին եւ ասել, որ կոմունալ-կենցաղային ծախսերի դիմաց «պարտքերը փակել է մի գործարարի օժանդակությամբ»:

Այս անգամ էլ, երեւի, Բաքվում սրտացավ մարդ կգտնվի եւ օգնության ձեռք կպարզի Էլչիբեյի ընտանիքին: Բայց իշխող վարչախումբը փոխարենը հաստատ նոր խնդիրներ կհարուցի, այնքան ժամանակ, մինչեւ էքս-նախագահի այրին կամ կհեռանա Ադրբեջանից, կա՛մ ստիպված տեղի կտա: Կա՛մ էլ, չի բացառված, կիշխանազրկվի Իլհամ Ալիեւը...

Իսկ առայժմ դրսում սառնամանիք է, եւ Ադրբեջանի էքս-նախագահի թոռնիկը մրսում է մի երկրում, որը հավակնում է դառնալ Եվրոպայի «էներգետիկ անվտանգության երաշխավորը»: Ադրբեջանն ինչպե՞ս կարող է այլ երկրի քաղաքացիների բարեկեցության երաշխավոր լինել, եթե Իլհամ Ալիեւի վարչախումբն այնքան քինախնդիր է, որ էքս-նախագահի ընտանիքը մատնում է ցրտահարության...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԷՆ

## Հրայր Բազէի նոր ալբոմին ներկայացումը Թէքէեան կեդրոնէն ներս



Ազգագրական անփոխարինելի նախաձեռնութեան մը ուրիշ մէկ փառաւոր արտահայտութիւնն է Հրայր Բազէի (Խաչերեան) վերջերս լոյս ընծայած «**Մէկ ազգ, մէկ եկեղեցի**» հրաշագեղ ալբոմը, որ ներկայացուեցաւ Նիւ Ջըրզիի Թէքէեան սրահին մէջ Նիւ Եորքի Թէքէեան մշակութային միութեան կողմէ, դեկտեմբեր 15-ին: Հակառակ տեղացող ձիւնին ստեղծած երթեւեկի արգելքներուն, սրահ փութացած էին մշակութասէր հասարակութիւն մը եւ գնահատելի թիւով երիտասարդներ:

Հակառակ որ այս շրջանակին համար ծանօթ անձնաւորութիւն է Բազէն, սակայն ԹՄՄ վարչութեան պատասխանատուներէն՝ բժ. Վաղինակ Դարբինեանը հետաքրքրական կերպով իր ողջոյնի խօսքին մէջ ներկայացուց մոնթրէալաբնակ արուեստագէտ ու լուսանկարիչ Հրայրը:

Աւելի քան մէկ ժամ տեւողութեամբ լուսարձակի տակ առաւ իր այս ալբոմը, որ նուիրուած է պատմական Հայաստանէն սկսեալ մինչեւ Միջին Արեւելքի մայր գաղութներու, Պոլիսէն մինչեւ Հեռաւոր Արեւելքի նօսրացած ու երբեմն միայն մէկ հայ բնակիչ ունեցող երբեմնի առոյգ հայկական համայնքներու, նախկին Խորհրդային Միութեան ու Ամերիկաներու տարածքին թէ Եւրոպայի մէջ փլատակ, կանգուն թէ աւելի նոր կառուցուած աղօթատեղիներուն, մատուռներուն, եկեղեցիներուն ու տաճարներուն եւ մեր նորանկախ Մայր հայրենիքին: Անոնք բոլորը կը տողանցեն այս ալբոմի էջերէն:

Ու մտովի ըլլալ ու քալել իրեն հետ այդ հեռաւոր ու երբեմն անմարդաբնակ մեր սարերուն ու լանջերուն՝ Վասպուրական աշխարհի Կտուցի ճգնարանն ու Վանայ լիճի Սուրբ Թովմասի լքուած մեր սրբավայրերը, կամ այրիացած մեր Անիի Ս. Աստուածածին եկեղեցին ու Տիգրան Հոնենցի Ս. Գրիգոր եկեղեցին, ցաւումով վայելել Բանգլադեշի ու Սինկափուրի եւ Խարթումի մեր Աստուծոյ տուները: Երթալ Արցախ ու անցնիլ Նոր Ջուղա ու Ատատան: Երթալ Անթիլիասի մայրավանք ու Զմմառի Հայ կաթողիկէ մայրավանքը ... երթալ մեր ծննդավայրերը՝ Պէյրութ, Այնճար, Դամասկոս ու Հալէպ ու անցնիլ Տէր Զօրէն, ուր սուրիական վերջին իրադարձութիւններուն ոճրագործ ձեռքեր ռմբահարել ջանացին մեր սուրբ նահատակներուն մատուռ-յուշարձանը:

Այցելէր է Նոր աշխարհ, ուր ամէն հայահոծ աւանի մէջ կանգնեցուցած ենք եկեղեցի մը՝ Կորդոբայէն մինչեւ Կարակաս, Ֆիլադելֆիայէն մինչեւ Հոլիվուդ ու Տորոնթօ ... Երկա՜ր է շարքը: Հայաստանի անկախացումէն ետք Երեւանի ու Մոսկուայի մեր եկեղեցիները, տաճարները եւ զմայլիլ Սուրբ Էջմիածինով, իր նո՜ր ու հին ամրակուռ կոթողներով, թանգարաններով ու վերանորոգուած շրջակայ մատուռներով: Վերջապէս՝ Պոլսոյ մեր ազգային եկեղեցիներուն կը միանայ Սուրբ քաղաքը՝ Երուսաղէմ, ուր Հրայր ցոյց կու տայ Սրբոց Յակոբեանց միաբանութեան ունեցած ազգային-եկեղեցական հարստութիւնները:

Ե՛ւ հայ առաքելական, ե՛ւ հայ կաթողիկէ ու աւետարանական, ե՛ւ էջմիածնական կամ անթիլիասական եկեղեցիները, քով-քովի դրուած գեղեցիկ համադրութիւն մը կը կազմեն շքեղ այս ալբոմին էջերուն մէջ:

Նոր տարուան լաւագոյն որպէս նուէր, այդ օր անմիջապէս սպառեցան ալբոմին օրինակները: Այս աշխատանքին համար կազմուած յանձնախումբի ժրաջան ատենապետուհին՝ Հիլդա Յարութիւնեան ջանք չէր խնայած թէքէեանավայել մակարդակով մը կազմակերպելու ձեռնարկն ու հիւրասիրութիւնը:

Հրայրին իսկ տողերով. «Այն ուղեւորութիւնները, որոնք այս գիրքին իրագործումն են, ուխտ մըն էր՝ որ կատարեցի, երբ կը պայքարէի քաղցկեղի դէմ: Երկրորդ կեանքի մը պարգեւը: 1993էն 2013 ճամբորդեցի համայն աշխարհի տարածքը եւ նկարեցի հայոց եկեղեցիները: Ահա՛ արդիւնքը այդ բոլորին»:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

## Կամիլ Սեն Սանսի Սուրբ Ծննդյան օրատորիայի երեւանյան պրեմիերա

Դեկտեմբերի 25-ին «Հովեր» պետական կամերային երգչախումբը եւ Հայաստանի պետական կամերային նվագախումբը կներկայացնեն Կամիլ Սեն Սանսի Սուրբ Ծննդյան օրատորիայի երեւանյան պրեմիերան:

Համերգային ծրագրում հանդես կգան՝ սոպրանո Իրինա Զաքարյանը, ալտ՝ Նարինե Անանիկյանը, մեցցո-սոպրանո՝ Ելենա Եղիազարյանը, տենոր՝ Լիպարիտ Ավետիսյանը, բարիտոն՝ Առնոլդ Քոչարյանը, երգեհոն՝ Աննա Բակունցը, տավիղ՝ Սոնա Ենգիբարյանը:

Համերգային ծրագիրը կկայանա Կամերային երաժշտության ազգային կենտրոնում:

Մ. Հ.

## Փառատոն՝ նվիրված Ռոմանոս Մելիքյանի 130-ամյակին



Դեկտեմբերի 23-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում տեղի կունենա հայ կոմպոզիտորական արվեստի 5-րդ փառատոնի համերգը, որը նվիրված է Ռոմանոս Մելիքյանի 130 եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 90-ամյակներին:

Ծրագրում կհնչեն Ռոմանոս Մելիքյանի «Օրորե», «Վայրի ծաղիկ», «Սեւ կաքավիկ», «Ծիլ-ծիլ ա», «Ես բլբուլ եմ», «Աշնան երգ», «Պսակ-պսակ», «Կլոր պար», «Սիրուն գիշեր», «Դափ դափի դափ», «Շափաղ կուտաս», «Մի լար», «Արտուտիկ», «Զընկլիկ», «Վարդը», «Սիրուն ուռենի» վոկալ ստեղծագործությունները: Համերգային ծեւագրի մենակատարներն են՝ Արմինե Խաչատրյանը, Արմինե Վարդանյանը, Արշակ Մուրադյանը, Փիրուզա Արզումանյանը, Անուշ Մելքումյանը, Լուիզա Երեմյանը, Կիմ Սարգսյանը:

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը յուրաքանչյուր տարի կրում է այն մեծերի անունները, ում հոբելյանը նշվում է տվյալ տարի: Փառատոնի նպատակն է սերունդների միջեւ ամուր կապի ստեղծումը, հայ կոմպոզիտորական դպրոցի՝ ապագա սերունդների համար ստեղծած ժառանգության արժեւորումը եւ այդ գործընթացի շարունակականության ապահովումը: Փառատոնը միտված է նաեւ հայ կոմպոզիտորական դպրոցի նվաճումների հանրահռչակմանը:

Նշենք, որ Հայ կոպոզիտորական արվեստի փառատոնն անցկացվում է նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո:

Այն կազմակերպել են մշակույթի նախարարությունը, Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը եւ Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունը:

Մ. Հ.

## Չարենցի տուն-թանգարանը թվայնացնում է ցուցանմուշներն ու բացառիկ նյութերը



Եղիշե Չարենցի տուն-թանգարանը հաջորդ տարվանից կունենա նոր ձեւավորմամբ թարմացված էլեկտրոնային կայք: Թանգարանի տնօրեն Լիլիթ Հակոբյանի հավաստիացմամբ՝ մշակութային օջախի պաշտոնական charents.am կայքը կներկայանա նոր լուծումներով: «Քանի տարի է՝ չենք թարմացրել մեր կայքը: Պատրաստվում ենք 2014-ին ներկայացնել նոր դիզայնով: Նախատեսում ենք նաեւ կայքում տեղադրել թանգարանի ցուցանմուշների նկարները, ինչպես նաեւ մի շարք այլ հետաքրքրական տեղեկություններ»,- «**Արմենպրես**»-ի թղթակցի հետ զրույցում նշեց Լիլիթ Հակոբյանը:

Բացի կայքը վերաձեւավորելուց, թանգարանը նախատեսում է իրականացնել նաեւ մի շարք այլ միջոցառումներ: Ավանդական տոնակատարություններ, ցուցահանդեսներ եւ գրքերի շնորհանդեսներ հաջորդ տարի շատ կլինեն: 2014-ին կշարունակվեն թվայնացվել թանգարանի նմուշները, ինչպես նաեւ կվերականգնվեն մի շարք հազվագյուտ գրքեր: «Թանգարանում ունենք արժեքավոր նյութերով հին ժապավեններ, որոնք հազվագյուտ նյութեր են պարունակում: Մի ժապավեն կա, որտեղ ձայնագրված է Վիլյամ Սարոյանի այցը մեր թանգարան եւ նրա ելույթը: Այս նյութերը եւս պետք է թվայնացվեն»,-հավելեց Հակոբյանը:

Տուն-թանգարանի տնօրենի խոսքով՝ մշակութային օջախի՝ 2013 թվականին նախատեսված բոլոր ծրագրերն իրականացվել են: «Այս տարի իրականացրել ենք 33 միջոցառում, որոնցից 22-ը եղել են ցուցահանդեսներ: Թանգարանը համալրվել է 40 նոր նյութերով, որոնք ձեռք են բերվել նվիրատվության միջոցով: Վերականգնել ենք 168 գիրք, ինչպես նաեւ 750-ից ավելի առարկաների համար գրվել են նոր գիտական վկայագրեր»,- նշեց Լիլիթ Հակոբյանը:

Հակոբյանի խոսքով՝ այս տարի թանգարան է այցելել 18 հազար մարդ: Նախորդ տարի՝ Չարենցի հոբելյանի հետ կապված, այցելուների թիվը 1600-ով ավելի է եղել:

Տարվա կարեւոր միջոցառումներից Հակոբյանն առանձնացրեց կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի հետ հանդիպում-երեկոն, որն իրականացվել էր «Չարենցը հյուրընկալել է» շարքի շրջանակում: «Երկոն վարեց հենց Մանսուրյանը, եւ մարդիկ շատ գոհ էին եւ հետաքրքրված: Դրանից հետո բազմաթիվ առաջարկներ ստացանք, որպեսզի կրկնենք նույն երեկոն: Բացի դրանից, այս տարի 11-րդ անգամ անցկացվեց Չարենցի պոեզիայի ասմունքի հանրապետական մրցույթ-փառատոնը, որը եւս հաջողված էր»,- փաստեց տուն-թանգարանի տնօրենը:

Լիլիթ Հակոբյանի համոզմամբ՝ թանգարանն ամեն ինչ անում է այցելուներին մշակութային օջախ բերելու եւ հետաքրքրելու նպատակով: «Ժամանակները փոխվել են, եւ մենք չենք կարող այժմ նախկին մեթոդներով այցելուներին գրավել դեպի թանգարան: Դա մի տեսակ նույնիսկ միամիտ կլինի: Մենք այժմ փորձում ենք կիրառել բոլոր միջոցները եւ քայլել ժամանակին համընթաց»,- եզրափակեց Լիլիթ Հակոբյանը:

Խորհրդային Հայաստանի նախարարների խորհրդի 1964թ. փետրվարի 8-ի որոշմամբ հիմնադրվեց Եղիշե Չարենցի տուն-թանգարանը այնտեղ, որտեղ 1935-1937թթ. ապրել է բանաստեղծը: Մշակութային օջախը բանաստեղծի կյանքը, գրական-մշակութային, հանրային-քաղաքական գործունեությունն ուսումնասիրող գիտական կենտրոն է, որտեղ պահպանվում եւ ցուցադրվում են բանաստեղծից մեզ հասած մասունքներ՝ անձնական իրեր, ձեռագրեր, փաստաթղթեր, գրքեր, լուսանկարներ, այլ նյութեր: Թանգարանի ամենանվիրական հատվածը հուշասենյակն է, որտեղ ամեն ինչ պահպանված եւ դասավորված է այնպես, ինչպես եղել է Չարենցի ապրած ժամանակ:

# Հայ պատանի շախմատիստներն առաջատար դիրքերում են

Արաբական Միացյալ Էմիրություններում ընթացող շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունում Հայաստանը ներկայացնող 28 շախմատիստներից առայժմ առավել հաջող են հանդես գալիս Անի Հարությունյանն ու Արամ Հակոբյանը, որոնք 6 հնարավորից վաստակել են 5,5-ական միավոր:




Անին հանդես է գալիս մինչեւ 16 տարեկան աղջիկների մրցաշարում: Նա ընդամենը կես միավոր է զիջում աղյուսակը գլխավորող չին շախմատիստուհի Թիանլու Գուին: Հայ շախմատիստուհին վերջին 3 տուրերում հաղթանակներ տոնեց Պոլինա Ռոդիոնովայի, Գուլիայ Նարզիկուլովայի եւ Մահալակշմի նկատմամբ:

Մինչեւ 12 տարեկան տղաների մրցաշարի մասնակից Արամ Հակոբյանը 5,5 միավորով Անդրեյ Եսիպենկոյի եւ Ռոբի Կեւլիշվիլու հետ գլխավորում է աղյուսակը: Արամը 4-րդ տուրում ոչ-ոքի խաղաց Ամին Տաբաթաբաեյի հետ, ապա հաղթեց Դանիել Դեակին ու Յի Ժուին:

Առաջատարների խմբում են գտնվում Մամիկոն Ղարիբյանն ու Ռոբերտ Մուրադյանը, որոնք վաստակել են 5-ական միավոր: Ղարիբյանը մինչեւ 10 տարեկան տղաների մրցաշարում 7-րդ տեղում է: Նա մեկ միավոր է զիջում Ավոնդեր Լիանգին եւ Ալիռեզա Փիրուզիին:

Մինչեւ 8 տարեկանների մրցաշարում հանդես եկող Ռոբերտ Մուրադյանը 4-րդ հորիզոնականն է զբաղեցնում: Նա նույնպես մեկ միավոր է զիջում առաջատարներին՝ Պրագնանանդային ու Իսիկ Կանին:

Մինչեւ 18 տարեկան տղաների մրցաշարում Հովհաննես Գաբուզյանը 6 հնարավորից վաստակած 4,5 միավորով 5-րդ տեղում է: Նա ոչ-ոքի խաղաց Կասպեր Դրոզդովսկու հետ, ապա հաղթեց Ուլվի Բաջարանիին, իսկ 6-րդ տուրում պարտվեց Պոուա Իդանիին: Վերջինս 5,5 միավորով առաջատարն է: Կարեն Գրիգորյանն ունի 4 միավոր: Նա առայժմ անպարտելի է: Մեկնարկում տոնած 2 հաղթանակներից հետո Կարենը 4 անընդմեջ ոչ-ոքի է ավարտել պարտիաները:

Մինչեւ 16 տարեկանների մրցաշարում 4,5-ական միավոր են վաստակել Տիգրան Հարությունյանն ու Մանուել Պետրոսյանը: Այստեղ առաջատարը Ռուսաստանը ներկայացնող Դավիթ Պառավյանն է, որը լրացուցիչ գործակիցներով գերազանցում է նույնպիսի արդյունք (5-ական) ունեցող յոթ շախմատիստի:

# «Բավարիան» նվաճեց բոլոր հնարավոր տիտղոսները




Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի գավաթակիր Մյունխենի «Բավարիան» հերթական տիտղոսը նվաճեց: Խոսեպ Գվարդիոլայի սաները դարձան աշխարհի ակումբային առաջնության հաղթող՝ եզրափակիչում 2-0 հաշվով հաղթելով Մարոկկոյի «Ռաջային»: Ամբողջ հանդիպումն անցավ «Բավարիայի» նկատելի առավելությամբ: Արդեն 7-րդ րոպեին Դանտեն առաջ մղեց «Բավարիային», իսկ 22-րդ րոպեին Ալկանտարան խփեց 2-րդ գնդակը:

«Բավարիան» ստացավ նաեւ «Արդար խաղի» մրցանակը: Թիմի հարձակվող Ֆրանկ Ռիբերին ճանաչվեց մրցաշարի լավագույն ֆուտբոլիստ: 2-րդ տեղը գրավեց «Բավարիայի» ավագ Ֆիլիպ Լամը, իսկ եռյակը եզրափակեց «Ռաջայի» հարձակվող Մուհսի Իաժիրը:

Աշխարհի ակումբային առաջնությունում տոնած հաղթանակի համար «Բավարիան» 3,65 մլն եվրո պարգեւավճար ստացավ: Ընթացիկ մրցաշրջանում թիմը 125 մլն եվրո պարգեւավճար է ստացել: Այդ գումարից 55,05 մլն-ը մյունխենցիները ստացել են չեմպիոնների լիգայում հաղթելու համար: Եվս 28,76 մլն եվրո թիմը վաստակել է չեմպիոնների լիգայի ընթացիկ խաղարկության 1/8 եզրափակիչ մտնելու համար:

Գերմանիայի չեմպիոնի տիտղոսը նվաճելու համար «Բավարիան» պարգեւատրվել էր 25,8 մլն եվրոյով: Գերմանիայի գավաթակիրի կոչման համար մյունխենցիները եւս 6,74 մլն եվրո ստացան, իսկ ՈւԵՖԱ-ի Սուպերգավաթի մրցաշարում հաղթելու համար թիմի պարգեւավճարը 3 մլն եվրո էր: 750 հազար եվրո էլ «Բավարիան» ստացել է Գերմանիայի Սուպերգավաթը նվաճելու համար:

Ինչպես տեսնում ենք, «Բավարիան» ընթացիկ մրցաշրջանում նվաճել է բոլոր հնարավոր տիտղոսները թե՛ Գերմանիայում, թե՛ միջազգային ասպարեզում:

# Գյոզալյանն ու Դաշյանը փորձաշրջան կանցնեն Բահրեյնում

**Ֆուտբոլի Հայաստանի նախորդ առաջնության լավագույն ռմբարկու Նորայր Գյոզալյանը մեկնել է Բահրեյն, որտեղ փորձաշրջան կանցնի տեղի «Ալ Մուշարակ» ակումբում: Նա թիմի կազմում հինգշաբթի օրը կմասնակցի ստուգողական հանդիպմանը: Հիշեցնենք, որ «Իմպուլսի» լուծարումից հետո Գյոզալյանը մեկնեց Բելառուս՝ հանդես գալով «Տորպեդո ԲելԱԶ-ում»: Սակայն հայ ֆուտբոլիստին չհաջողվեց ամրապնդվել թիմի կազմում:**

**Շուտով Բահրեյն կմեկնի նաեւ Կապանի «Գանձասարի» կիսապաշտպան Արտակ Դաշյանը: Նա եւս փորձաշրջան կանցնի «Ալ Մուշարակում»:**

# Ջոկովիչն ու Ուիլյամսը լավագույն թենիսիստներն են

**Թենիսի միջազգային ֆեդերացիան ամփոփել է մրցաշրջան-2013-ի արդյունքները: Կանանց թենիսում լավագույնն է ճանաչվել ամերիկացի Սերենա Ուիլյամսը, որը գլխավորում է թենիսիստների համաշխարհային դասակարգման ցուցակը: Նա 4-րդ անգամ է արժանանում լավագույնի տիտղոսին:**

**3-րդ տարին անընդմեջ թենիսիստներից ուժեղագույնն է ճանաչվում սերբ Նովակ Ջոկովիչը: Զուգախաղերում տղամարդկանցից ուժեղագույնը ամերիկացիներ Մայք եւ Բոբ Բրայան եղբայրներն են, կանանցից՝ Սառա Էռանին եւ Ռոբերտա Վինչին:**

## ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ

# Յուրա Մովսիսյանը լավագույնների թվում է

**Ռուսական «R-Sport» կայքի անցկացրած հարցման արդյունքներով, ՀՀ հավաքականի եւ Մոսկվայի «Սպարտակի» հարձակվող Յուրա Մովսիսյանը 2-րդն է ճանաչվել առաջնության լավագույն ֆուտբոլիստների մրցույթում: Նա վաստակել է 33 միավոր: Մովսիսյանը զիջել է «Զենիթի» եւ ՌԴ հավաքականի կիսապաշտպան Ռոման Շիրոկովին, որը 45 միավոր է վաստակել: Լավագույն եռյակը եզրափակել է Մոսկվայի «Դինամոյի» եւ ՌԴ հավաքականի հարձակվող Ալեքսանդր Կոկորինը, որի հաշվին 23 միավոր է գրանցված:**

# Մխիթարյանը բավարարվեց արծաթե մեդալով

**Գրիգոր-Սեւակ Մխիթարյանին չհաջողվեց նվաճել Բրազիլիայի շախմատի չեմպիոնի տիտղոսը՝ բավարարվելով արծաթե մեդալով: Մխիթարյանը 11 հնարավորից վաստակեց 8 միավոր: Հայ շախմատիստն անհաջող խաղաց վերջնագծում՝ կրելով 2 անընդմեջ պարտություն Սանտյագո դե Մոուրայից եւ Ամորիմ Բարբոսայից: Եվ թեեւ վերջին տուրում Մխիթարյանը հաղթեց Մաքսիմո Մաչեդոյին, սակայն դա բավարար չէր առաջատարին հասնելու համար: Չեմպիոն հռչակվեց Ռաֆայել Լեյթաոն, որը վաստակեց 9,5 միավոր: Բրոնզե մեդալակիր դարձավ 8 միավոր վաստակած Ցեզար Ումետսուբոն:**

# Դանիելյանն ու Անդրեասյանը առաջատարների թվում են

**Էլինա Դանիելյանն ու Զավեն Անդրեասյանը հաջող են մեկնարկել Գրոնինգենի շախմատի մրցաշարում՝ տոնելով 2-ական հաղթանակ եւ 14 շախմատիստների հետ գլխավորելով աղյուսակը: Զավենը պարտության է մատնել Բրենս Բուրգին եւ Շամիլ Արսլանովին, Էլինան հաղթել է Ալեքսանդր Չեռնուխինին եւ Մարտին Մոլինարոլիին: 3-րդ տուրում հայ շախմատիստները կմրցեն միմյանց հետ:**

**Հայաստանի 3-րդ ներկայացուցիչը՝ Տիգրան Սիմոնյանը, մեկնարկում հաղթելով Տյարկ Վոսին, 2-րդ տուրում պարտվեց Էրվին Լ՛Ամիին:**

# Լավագույնը Հովհաննիսյանի եւ Հայրապետյանի արդյունքն է

**Արաբական Միացյալ Էմիրություններում մեկնարկած շախմատի մրցաշարի 99 մասնակիցների թվում են Հայաստանը ներկայացնող 7 շախմատիստներ: Կայացած 4 տուրից հետո հայ շախմատիստներից լավագույն արդյունքն ունեն Հովիկ Հայրապետյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը, որոնք վաստակել են 3-ական միավոր: Ռոբերտը մեկնարկում 3 անընդմեջ հաղթանակ տոնեց Միտրա Հեյազիպուրի, Աբդելռահման Հեշամի եւ Բահրուզ Ռզաեւի նկատմամբ, իսկ 4-րդ տուրում պարտվեց Բաադուր Ջոբավային: Հենց վերջինս էլ 4 միավորով գլխավորում է աղյուսակը:**

**Հայրապետյանը հաղթել է Ռամեզ Սամեդիին եւ Իրինա Չելյուսկինային, ոչ-ոքի է խաղացել Զիրվա Սաֆարովի ու Վիորել Յորդաչեսկու հետ:**

**Արման Փաշիկյանն ու Լեւոն Բաբուջյանը վաստակել են 2,5-ական միավոր, Վահե Բաղդասարյանն ու Տիգրան Ս. Պետրոսյանն ունեն 2-ական միավոր, Մարկ Բասենցյանը՝ 0,5 միավոր:**

# Չեմպիոնները որոշվեցին



**Մայրաքաղաքի «Կիլիկիա» մարզասրահում կայացավ ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի առաջնությունը: Քաշային 8 կարգերում չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին հանրապետության տարբեր մարզերի եւ Երեւանի 95 ըմբիշներ:**

**Ըստ քաշային կարգերի հանրապետության չեմպիոններ հռչակվեցին Գարիկ Բարսեղյանը (57 կգ), Նարեկ Սանոյանը (61 կգ), Արթուր Բաղդասարյանը (65 կգ), Դավիթ Ափոյանը (70 կգ), Գրիգոր Գրիգորյանը (74 կգ), Վահե Թամրազյանը (86 կգ), Էդգար Ենոքյանը (97 կգ) եւ Անդրանիկ Գալստյանը (գերծանրքաշ):**

# Անանդը հրաժարվում է հավակնորդների մրցաշարից

**Շախմատի աշխարհի նախկին չեմպիոն Վիշվանաթան Անանդը հայտարարել է, որ հավանաբար չի մասնակցի 2014-ի մարտին կայանալիք աշխարհի առաջնության հավակնորդների մրցաշարին: Կանոնակարգի համաձայն, հավակնորդների մրցաշարի մասնակիցը մեկնարկից 1 ամիս առաջ պետք է հայտնի իր հրաժարվելու մասին:**

**Եթե Անանդը վերջնականապես հաստատի իր հրաժարականը, ապա նրա փոխարեն Խանտի Մանսիյսկում հանդես կգա իտալացի Ֆաբիանո Կարուանան, որը ներկայումս ՖԻԴԵ-ի դասակարգման ցուցակում 7-րդ տեղում է: Նա շախմատի Գրան պրիի մրցաշարում 3-րդ տեղն էր գրավել:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Հայտարարություն

Սույնով հայտնում ենք, որ «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) կազմակերպում է հանդիպում Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի շինարարության եւ պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շահառուների հետ, որին հրավիրվում են մասնակցելու ծրագրի շահառուների բոլոր խմբերի ներկայացուցիչները՝ յուրաքանչյուր անձ եւ (կամ) կազմակերպություն, որի վրա Ծրագիրը կարող է ունենալ ուղղակի կամ անուղղակի որեւէ ազդեցություն եւ (կամ) որը Ծրագրի հետ կապված շահեր եւ (կամ) գործառույթներ ունի եւ (կամ) որեւէ կերպ կարող է ազդել Ծրագրի իրականացման վրա:

Հանդիպումը տեղի կունենա 2014թ. հունվարի 17ին, ժամը 15:00ին, ՀՀ Լոռու մարզի Թեղուտ գյուղի մշակույթի տան դահլիճում:

Հանդիպման օրակարգում հետեւյալ հարցերն են՝

- Ծրագրի շրջանակներում 2013թ. ընթացքում կատարված շինարարական եւ մոնտաժային աշխատանքները, 2014թ. առաջին եռամսյակում նախատեսվող գործունեությունը 2013 թ. ընթացքում շրջակա միջավայրի պահպանության եւ աշխատանքի անվտանգության ապահովման ուղղությամբ իրականացված միջոցառումները, 2014 թ. առաջին եռամսյակում նախատեսվող միջոցառումները
- Ծրագրի շահառուների ներգրավման պլանը (լրամշակված տարբերակ), շահառուների ներգրավման եւ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ուղղություններով 2013թ. իրականացված եւ 2014թ. առաջին եռամսյակում նախատեսվող միջոցառումները
- Պատմամշակութային հուշարձանների պահպանության ուղղությամբ 2013թ. կատարված եւ 2014թ. ընթացքում նախատեսվող աշխատանքները
- Այլ հարցեր:

Ընկերության՝ ք. Երեւան, Խանջյան 19 հասցեով եւ Լոռու մարզի Թեղուտ գյուղում գտնվող գրասենյակներում, Լոռու մարզի Ալավերդի քաղաքի քաղաքապետարանում, Թեղուտ եւ Շնող գյուղերի գյուղապետարաններում 2013թ. դեկտեմբերի 23-ից 2014թ. փետրվարի 3-ը կբացվեն գրանցամատյաններ, որոնցում շահառուները կարող են գրառել մեկնաբանություններ, առաջարկություններ, նկատառումներ եւ այլ հաղորդագրություններ՝ հանդիպման օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ: Օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հաղորդագրություններ այդ ժամանակահատվածում կարող եք ուղարկել նաեւ էլ. փոստով՝ pr@vallex.com հասցեով:

Ընկերությունն ակնկալում է շահառուների ակտիվ եւ կառուցողական մասնակցություն:

# Հայտարարություն

ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդը տեղեկացնում է, որ ձմեռային զորակոչի ընթացքում քաղաքացիների դիմումների եւ բողոքների քննարկման հանձնաժողովի վերջին նիստն ընթացիկ տարում կկայանա դեկտեմբերի 26-ին:

Հանձնաժողովի աշխատանքները կվերսկսեն Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոներից հետո՝ 2014թ. հունվարի 9-ին եւ կշարունակվեն մինչեւ զորակոչի ավարտը:

Հանձնաժողովի նիստերը գումարվում են երկուշաբթի եւ հինգշաբթի օրերին Մոսկովյան 5 հասցեում գտնվող հասարակական խորհրդի աշխատավայրում: Դիմում-բողոքներն ընդունվում են աշխատանքային բոլոր օրերին:

Տեղեկությունների համար զանգահարել 010523482, 010523486 հեռախոսահամարներով:

**ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդ**

ВТБ

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն հայտարարում է բաց մրցույթ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի արտաքին գովազդի տպագրման, տեղաբաշխման եւ սպասարկման կազմակերպության ընտրման նպատակով:

Մրցութային առաջարկություններն անհրաժեշտ է ներկայացնել «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ՝ ՀՀ, ք. Երեւան, 0010, Մ.Խորենացի փող., շ. 15/1 հասցեով:

Մրցութային հայտերն ընդունվում են մինչեւ 2014թ. հունվարի 20-ը ներառյալ, ժամը 17:00:

Մրցութային հայտերի բացումը տեղի կունենա 2014թ., հունվարի 23-ին, ժամը 17:00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերն ու Մրցույթի պայմանները տեղադրված են «ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ www.vtb.am:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Մրցութային կոմիտե ՀՀ, ք. Երեւան, 0010, Մ.Խորենացի փող., շ. 15/1 հասցեով:

***Կոնտակտային անձ՝***

*Լուսինե Սուսանյան*
Հեռ. (+37410) 51-37-49, ներքին՝ 8 3302
Էլ. փոստ՝ l.susanyan@vtb.am

*Մարինա Սաժումյան*
Հեռ. (+37410) 51-37-49, ներքին՝ 8 3402
Էլ. փոստ՝ m.a.sazhumyan@vtb.am

**Սրբագրում եւ խմբագրում**
ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի
E–mail: xachagox@mail.ru, հեռ.՝ 094 48-68-03

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են հետեւյալ լոտերը՝

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող՝

- ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն համայնք, Սարյան փողոց 27 շենք, բնակարան 33 հասցեում գտնվող 69.71 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 37670000 ՀՀ դրամ:
- ՀՀ, ք. Երեւան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, Սվաճյան փողոց, թիվ 27/15 հասցեում գտնվող 119.2 ք.մ. մակերեսով շինություն եւ 0.01369 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21330000 ՀՀ դրամ:
- ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Վայք, Ջերմուկի խճուղի 53, թիվ 24 հասցեում գտնվող 76.0 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 6900000 ՀՀ դրամ:
- ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Չարենց թաղամաս ? 379Ա հասցեում գտնվող 614.6/728.7 ք.մ. մակերեսով բնակելի տուն, 2.9 ք.մ. մակերեսով պարիսպ եւ 0.0804 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 65880000 ՀՀ դրամ:
- ՀՀ, Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան 8/1 հասցեում գտնվող 60.37 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 4560000 ՀՀ դրամ:
- ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն համայնք, 4-րդ թաղամաս, 39 շենք, բնակարան 55 հասցեում գտնվող 59.6 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 22530000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդը՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 (3-րդ հարկ) հասցեում 09.01.2014.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 13.02.2014թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում 2470103078480000 հաշվեհամարին): Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am, www.akson.am կայքերը:

## ՑԱՆԿ

**ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» ծրագրի «Մրցակցային դրամաշնորհների ծրագիր» բաղադրիչի շրջանակներում 2013թ. հունվարի 18-ին ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի, Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի եւ Արարատի մարզերում հայտարարված 4-րդ փուլի մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ծրագրերի**

| N | Գրանցման N | Ծրագրի անվանումը | Մարզ, համայնք | Հայտատուի անուն, ազգանուն | Ծառայություն մատուցողի անուն, ազգանուն | Ծրագրի տևողությունը (ամիս) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 3/4 | Նորագույն տեխնոլոգիաներով՝ ինֆրակարմիր ճառագայթման եղանակով չրերի արտադրամասի ստեղծում ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում: | ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ | «Աշտարակ» կանանց ոչ ֆորմալ ֆերմերային խումբ, ղեկավար Հռիփսիկ Ատոմյան | Սանդրո Աբովյան | 24 |
| 2 | 7/4 | «Ճապոնական», «Մարմարէ», «Անգլիական» և «Փարավոն» ցեղատեսակի լորերի տոհմային տնտեսության ստեղծում ՀՀ Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքում | ՀՀ Արմավիրի մարզ, Տարոնիկ համայնք | «Տարոնիկ» ոչ ֆորմալ ֆերմերային խումբ, ղեկավար Արմեն Եղիազարյան | Անուշավան Աղաջանյան | 18 |
| 3 | 10/4 | Ռապի ապրանքային մշակում, տարայավորում և փաթեթավորում | ՀՀ Կոտայքի մարզ, Սոլակ համայնք | «Սոլակ» ոչ ֆորմալ ֆերմերային խումբ, ղեկավար Խաչիկ Մարգարյան | Վահրամ Ապրեսյան | 24 |
| 4 | 16/4 | Ստեվիայի (մեղրախոտի) արտադրության կազմակերպում տնկարանային տնտեսության պայմաններում | ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի | «Ստեվիա» ոչ ֆորմալ ֆերմերային խումբ. ղեկավար Ռաֆիկ Ղազինյան | Շիրակ Եդիգարյան | 24 |
| 5 | 21/4 | Մասնագիտացված սածիլանոցի ստեղծում և պատվաստման տեխնոլոգիայի ներդրմամբ բանջարեղենի բարձրորակ սածիլների արտադրության կազմակերպում | ՀՀ Արարատի մարզ, Ավշար համայնք | «Գալուստ և որդիներ» ՍՊԸ, տնօրեն Հարություն Հովհաննիսյան | Գայանե Մարտիրոսյան | 24 |
| 6 | 29/4 | Ալոե վերայի մշակություն | ՀՀ Արմավիրի մարզ, Գայ համայնք | «Կարապետ Ավագյան» Ա/Ձ | Պողոս Գևորգյան | 24 |

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 23.12.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: